



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՍԿԻՐ

ԶԱՐԾԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԵՋԻՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ

1 ՅՈՒՆԻՍ 1910

ԹԻԻ 12

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Եկեղեցին եւ Սահմանադրութիւնը

Ազգ. Սահմանադրութեան առաջին հիմնադիրը. — Յա-
կոբ Կրճիկեան

Մայիս (Քերթուած)

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԻՆ. — Սեփան Սիւնեցի

Հայոց Հասիկը

ԿՐՕՆ. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ. —

Հանքարձանի տօնը

«ՈՐՎ Ե ՍԱ»

ՇԱՐԱԿԱՆԸ ՅԱՆԳԱՒՈՐ. — Որք ճակակից (Գրա-
բարեկ)

ՕՐՈՒՍՆ ՏՕՆԵՐԸ. — Հանքարձան եւ կամ փիճակ,
եւ երկրորդ ծաղկազարդ

ՄՈՌՑՈՒՍԾ ԷՋԵՐ. — Սիմոնակիան տեղերը

Հանգիստ Տ. Միրսից Եպ. Վեհապետեանի

Կի՛նը աւելի կրօնասէր Ե քան այլ մարդը

Բառարան Ս. Գրոց յնապաստնութեան

Ազգային կեանքը

«Տաճար»ի այս թիւը զարդարուած է սահմանադրութեան հիմնադիրներէն

ՅԱԿՈԲ ԿՐՃԻԿԵԱՆԻ, ԳՐԻԳՈՐ ՕՏԵՍՆԻ, ՆԻԿՈՂՈՍ ՊԱՂԵԱՆԻ եւ

ՏԳԴ. Ն. ՌՈՒՍԻՆԵԱՆԻ եւ նաեւ շնորհաւ փախճանած ՏԷՐ

ՄԿՐՏԻՉ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԵՀԱՊԵՏԵԱՆԻ յուսանկարներով:

Գ/ն 50 փարայ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՋՈՒՄԱՆ

Հաճախորդը Յակոբեան իսկ, Կ. Պոլիս

ԶԱՐԾԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ

ԱՐՇԱԿ Ա. ԱԼՊՅԱՃԵԱՆ

ԼՈՒՍՆԹԱԳ

ԵՂԻՇԷ Վ. ԽԱԶԵՐԵԱՆ

ԳԵՈՐԳ Մ. Վ. ԱՍԼԱՆԵԱՆ

ՅԱԿՈԲ ԱԼԹՈՒՆԵԱՆ

ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍԵԱՆ

ՅԱԿՈԲ ԱԼԹՈՒՆԵԱՆ

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԼԵՒՈՆ Յ. ԳԱՐԱԿԵՉԵԱՆ

ՂԵՒՈՆԴ Մ. Վ. ԴՈՒՐԵԱՆ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿԻՕՆԱԹԵՐԹԻ

ԱՂԻՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխանորդ
Տ. Արսէն Բ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ. — Տ. Ռուբէն Բ. Դա-
րիկեան
ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պո-
լոս Վրդ. Գաֆթանեան
ԱՅՆԹԱՊ. — Տ. Գարեգին Բ. Պողարեան
ԱՐՄԱՇ. — Փոխ-Վանահայր Տ. Մարտիկ Մ.
Վրդ. Նարայեան
ԲԱԲԵՐԴ. — Մ. Սանտուհան էֆ.
ԳԱՂԱՏԻԱ. — Առաջնորդ Տ. Բարգէն Մ.
Վրդ. Կիւլէսերեան
ԴՕՆԻԱ. — Տ. Յովհ. Բ. Դուլումճեան
ԴԱՂԻՐԵ. — Առաջնորդ Տ. Մկրտիչ Մ.
Վրդ. Աղաւունճի
ԵԴԵՍԻԱ. — Բ. Թիւրաքեան էֆ.
ԵՕՁՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Մ. Վ.
Դիմաքեան
ԵՐՁՆԿԱ. — Առաջնորդ Տ. Երուանդ Վ.
Փէրտանճեան
ԵԻԴՈԿԻԱ. — Առաջն. Տեղապահ Տ. Ար-
տաւազդ Վրդ. Գալէստերեան
ԶՄԻՒՌԻՍ. — Տ. Յարութիւն Բ. Տ.
Սարգսյան
ԷՍԿԵՇԷՆԻՐ. — Տ. Դաւուտ Բ. Տ. Գա-
լուստեան
ԽԱՐԲԵՐԴ. — Առաջն. Տեղապահ Տ. Գե-
որգ Մ. Վրդ. Աղանեան
ԿԱՐԻՆ. — Առաջնորդ Տ. Սմբատ Մ. Վ.
Սաատէթեան
ԿԻՐԱՍՈՆ. — Մաթոս էֆ. Թոքատեան
ԿԻՒՄԻՒԼՃԻՆԷ. — Տ. Ներսէս Բ. Նշանեան
ՀԱԼԷՊ. — Առաջն. Տեղապահ Տ. Շահէ Վ.
Գոսպարեան
ՄԱՆՁԷՍԹԻՐ. — Առաջնորդ Տ. Գէորգ Ս.
Եպիսկ. Իւթիւճեան
ՄԱՐԱՇ. — Տ. Հմայակ Բ. Վարժա-
պետեան
ՄԱՐՁՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան
ՄԱՐՍԻԼԻԱ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Եղիշ
Բ. Դալչինեան
ՄՈՍԿՈՒԱ. — Տ. Պօպօնեան Բ.
ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ոսկի Բ. Պիպիեան
ՆԻՒ-ԵՕՐԲ. — Տօթ. Թիւրաքեան Խան
ՆՈՐ ՋՈՒՂԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.
Բազարաս Վրդ. Վարդապետեան

Շ. ԴԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Բ. Տառ-
եան
ՈՒՇԱՔ. — Կարապետ էֆ. Բենեան
ՊԱՆՏՐՄԱ-ՊԱԼԷՔԷՍԷՐ. — Առաջնորդ Տ.
Կարապետ Մ. Վրդ. Մալլարման
ՊԱՂԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ս.
Եպիսկ. Կէօմրիւքճեան
ՊԱՅՐԱ. — Կարապետ էֆ. Բէրթմէնեան,
տնօրէն ազգ. վարժարանաց
ՊԱՐՏԻՋԱԿ. — Յովհաննէս էֆ. Տ. Կարա-
պետեան
ՊԵՅՐՈՒԹ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Եպի-
սկ. Վրդ.
ՊՈՒՐԷՇ. — Դաւարոս էֆ. Կանիճեան
ՊՐՈՒՍԱ. — Առաջնորդ Տ. Յովհաննէս Ս.
Եպիսկ. Արշարունի
ՌՈՒՍՃՈՒՐ. — Տ. Մկրտիչ Բ. Մըրճ-
նիկեան
ՌՕՏՕՍԹՕ. — Առաջն. Փոխանորդ Տ. Բար-
թոլ Բ. Թաքմճեան
ՍԱՄՍՈՆ. — Առաջն. Տ. Սահակ Մ. Վրդ.
Օտապալեան
ՍԵԲԱՍՏԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բ. Օտապալեան
ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Սերովբէ
Բ. Ներշապուհ
ՍՕՖԻԱ. — Տ. Մարտիկ Բ. Մարտիկ-
եան
ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիմիտրիոս Բ. Տրէզ-
եան
ՏԷՏԷ ԱՂԱՃ. — Դարեգին Բ. Տէօլ-
լէթեան
ՏԻԴՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէսեան
ՏԻՄԷԹՕԳԱ. — Տ. Գէորգ Բ. Թէրզեան
ՏՓՂԻՍ. — Հ. Առաքելեան
ՓԱՐԻՉ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառճա-
պուհ Բ. Բիպարեան
ՔԷՕՍԹԷՆՃԷ. — Տ. Մատթէոս Բ. Մա-
նիկեան
ՔՂԻ. — Առաջն. Տեղապահ Տ. Պսակ Վրդ.
ՖԻԼԻՊԷ. — Տ. Տաճատ Բ. Դերձակեան
ՖՐԷՋՆՕ. — Ազն. Յակոբ էֆ. Նշկեան

«ՏԱՃԱՐ»-ը կը վաճառուի բոլոր լրա-
գրավաճառներու կողմէ: Վաճառման կեդ-
րոնատեղին է Պոլիս, Պազըրճըլսը՝ Արմե-
նակ Եազըճեան և Լնկ. «Սիւնեաց» Գրա-
ստան. Բերա, Սըլանախոյ դէմ, ծխալա-
ճառ Գառնիկ էֆ. Կիւլէրեանի և ուրիշ
ծխալաճառներու քով:

ՏԱՋԱՐ

Ժողովրդացին ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

Ի ՅՈՒՆԻՍ 1910

ԹԻԻ 12



ՅԱԿՈՒ ԿՐՃԻՆՍԻ

(1807—1865)

Առաջին հիմնադիր Ա.գգ. Սահմանադրութեան :

Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ն

ԵՒ

ՍՍ.ՀՄԱ.ՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

«Երկու խոշոր հակադրութիւններ, երկու անհաշտ տարրեր, հակընդդէմ սկզբունքներ, յամառ հակառակորդներ, սեւական պայքարողներ, որ երբեք համաձայնութեան չպիտի գան իրարու հետ, հաշտութեան ձեռք չպիտի կարկառեն բնաւ, չպիտի հասկընան իրար, յաւիտեանական ընդդիմադիրներ պիտի մնան, մերթ կռուելով յայտ յանդիման՝ սուր և գուցէ արիւնալից ընդհարումներ յառաջ բերելով, և մերթ թուլցնելով պայքարին սաստկութիւնը, բայց միշտ ուսօրներ մնալով, խուլ հակակրութեան մը, խորունկ անհասկացողութեան մը բնորոշ տարրերը պահելով զիրենք կազմակերպող ու վարող սկզբունքներուն մէջ: Մէկը աններսողութիւնն է մարմնացած, միւսը մարդկային իրաւունքներու նուիրագործումը. մէկը բռնապետութեան օժանդակն է, կաշկանդումը ազատ մտածումին, միւսը խորհրդանիշը ժողովուրդներու ազատագրութեան. մէկը անցեալին գերիշխող սուրբն էր, միւսը ապագայի կեանքը կը խորհրդանշէ. մէկը ժողովրդային միաբնի և գործունէութեան կաշկանդումը, մահացումը եղած է, միւսը թուիչը կուտայ մարդկայնական ամէնէն առողջ գործունէութեան»

Այս իմաստով, — եթէ ոչ այս բաներով, — կը գրէին ու խօսէին որոշ դասակարգի մարդիկ, որոնք Հայ Եկեղեցիին նման դարաւոր և էական

ժողովրդական հաստատութեան մը հասցէին նետուած նմանօրինակ զըրպարտութիւններով կը կարծէին ծառայութիւն մատուցած ըլլալ Հայ ժողովուրդին, որոնք այդ հաստատութեան կործանումին մէջ կը յուսային գտնել Հայ ժողովրդային մտքի կատարեալ ձերբազատութիւնը: Հիմայ, մասնաւորապէս Պոլսահայ մամուլին մէջ, խիստ ցանցառ կը նշմարուին այդ կարգի յախուռն յայտարարութիւններ. հանրային գումարումներու մէջ շրջահայեաց բացատրութիւններ կը գործածուին, ու կը զգուշացուի պոռոտ բացազանչութիւններէ: Ասիկա արդիւնքն է ժողովրդային գերագրգիռ յուզումին, որ յառաջ եկաւ Հայուն ամէնէն նուիրական զգացումներու վիրաւորանքէն, Հայուն պաշտելութեան առարկաներու հանդէպ ցուցուած թշնամանքէն:

Ժողովրդային զայլոյթի բուռն թափին առջեւ, նոյն պոռոտախօսներն անդրադարձան իրենց միալին վրայ. հասկցան թէ արտասահմանի կեանքին մէջ ստացուած համոզումներու անկեղծ արտայայտութիւնը՝ բոլորովին տարբեր արդիւնք յառաջ կը բերէ իրենց յուսացածէն, պարզապէս կը վարկաբեկէ իրենց բոլոր վարդապետութիւնները: Ուստի չափաւորեցին իրենց յանդուգն դատումները, և մեղմացնելու համար մինչեւ վերջին ժամանակներ գրուածները, ինչ արհամարհանք որ նետած էին կրօնքին ու Եկեղեցիին հասցէին, ջանացին վերագրել զեղծ եկեղեցականութեան, որուն դէմ ոչ ոք առարկութիւն կրնար ունենալ:

Մենք կը կարծենք — ու զօրաւոր պատճառներ ունինք ասոր — թէ այդ

կարգի անձեր՝ անկեղծ չեն իրենց ներկայ յայտարարութեանց մէջ։ Իրենց ներքին համոզումը, անկեղծ անկաշկանդ գաղափարը այն էր՝ ինչ որ առաջ յայտնեցին։ Հիմակ իսաւրէի մասնաճիւղի քաղաքականութեան կը հետեւին։ Ամէն պարագայի մէջ, մարդիկ ազատ են իրենց գաղափարը յայտնելու՝ ինչ կերպով որ կ'ուզեն։

Խնդիրն այն է որ հիմա միտքերը հանգարտած են ըստ բաւականին, ու մենք կրնանք պաղարկել թիւնով քննական ակնարկ մը նետել Հայ Եկեղեցւոյ վարչային սկզբունքներուն վրայ, տեսնելու համար թէ իրօք մեր Եկեղեցին անհաշտ է սահմանադրական ազատ գաղափարներու, իրօք իր վարչային դրութեամբ անհամաձայն կը գտնուի ժողովրդային իրաւանց ազատ կիրարկումի գաղափարին, իրօք օժանդակ մ'է բռնապետութեան և ճնշող մը ժողովրդային ձայնին։

Հայ. Եկեղեցւոյ դարաւոր, արիւնալից պատմութիւնը միակ պատասմունքի այս հարցումին.

—Ո՛ր 2:

Ո՛ր 1. Աւետարանի ճշմարտապէս ժողովրդասէր, հաւասարութեան՝ արդարութեան և սիրոյ վսեմ սկզբունքներուն վրայ հիմնուած ու է Եկեղեցի չի կրնար օժանդակ մ'ըլլալ ժողովուրդի իրաւանց բռնաբարման։ Որոնք որ տարբեր վարմունք ունեցած են, անոնք հակառակ վարուած են իրենց հիմը կազմող աւետարանական սկզբունքներուն։ Այդպէ՛ս եղած է Լատին Եկեղեցին որ, ինչպէս այնքան յատկօրէն կը բացատրէր Գեր. Տ. Բարդէն Մ. Վ. Տաճարի Թ. Թիւով, կը ցոլացնէ իր մէջ լատին ցեղին տի-

րապետողի միահեծան ոգին, և եղած է էապէս կղերաւարական Եկեղեցի մը, իսպառ անտեսելով ժողովուրդը և անոր իրաւունքներն ու արդար պահանջումները, լռեցնելով ժողովուրդին ձայնը։

Կրնա՞նք լսել որ այսպէ՛ս եղած ըլլայ մեր ազգային Եկեղեցին, իր կազմութեան առաջին օրերէն մինչեւ ցայսօր։ — Բնաւ երբեք։ Առաժի կարգ անցած է իր ժողովրդականութիւնը. և այնչափ յառաջ տարուած է այդ ժողովրդային ոգին, որ իր զեղծումներն իսկ ունեցած է, որոնց վրայ հարեւանցի ակնարկ մը նետած էր Տ. Բարդէն Մ. Վ., քիչ մը վերը յիշուած յօդուածին մէջ։(*)

Ժողովուրդը իր հզօր ձայնն ունեցած է սկիզբէն ի վեր, ոչ միայն իր հայրապետներու ընտրութեան, այլ նոյն իսկ գաւառաբանական խնդրոց մէջ։ Գիտենք թէ Մեծն Ներսէս Հայոց հայրապետը, նախարարներու, զինուորներու և ժողովրդեան մեծ բազմութեան միաձայն հաւանութեամբ ընտրուած է Հայոց հովուապետ։ Գի-

(*) Անցեալ օր Բաքերդի երկու գիւղացի ազգայիններ մեր հետ ունեցած տեսակցութեան միջոցին կը պատմէին թէ ինչո՞ւ այն կողմերու առաջնորդներն երկար պաշտօնավարութիւն մը չէին կրնար ունենալ։ Ս. Քրիստափորի վանքը տեղացի մէկ քանի ջոջերու սեփականութիւնը դարձած է, կ'ըսէին, եւ ատոնք այն վանքին ճոխ հասոյթներով իրենց քակը կը պարարեն եւ խոշոր ամբարանոցները կը լեցնեն. եւ այն բոլոր առաջնորդներն որ ուզեն զօրեղ ձեռքով մը կառավարել այդ հասոյթները, եւ կրթական ու բարեգործական օգտակար նպատակի մը յատկացնել, անմիջապէս զրպարտագրի մը առարկայ կը դառնան այդ ջոջերուն եւ իրենց արքանեակներուն կողմէ, ու կը հարկադրուին ոտքերնուն փոշին թօթելով հեռանալ քաղաքէն։ Ու Բաքերդ միակը չէ իր այդ կարգի անխիղճ ջոջերով, որ պատուհասը կը դառնան հանրային իրաւանց եւ զանոնք պաշտպանութեւնը . . . :

տեղը նաև թէ ազնուական այդ մեծ գէւթը, ո՞րքան ժողովրդասէր հովիւ մը եղաւ իր հօտին: Ան հիմնեց հիւանդանոցներ, աշխատանոցներ, որբանոցներ, վարժարաններ և վերջապէս այն ամէն բաները որ այսօր, քաղաքակրթութեան այս դարուն մէջ իսկ, մեծ պատիւ պիտի բերէին ու է հովուապետի: Գիտե՛ք նաև թէ ո՞րքան ազդու ջանքեր ունեցաւ Հայ Արշակունեաց երեւուն դահն ամրտպնդելու համար, թագաւորն և նախարարները խրատելով, կշտամբելով ազգային ժողովներու մէջ: Գիտե՛ք մանաւանդ, թէ նոյն ազնուական հայրապետը, «Աշտիշատի մէջ ժողով գումարեց Եպիսկոպոսներէ և քաղմաքիւ աշխարհականներէ, կանոնական սահմանադրութեամբ ջանալով մարդասիրութիւնն և սղորմածութիւնն արմատացնել Հայաստանի մէջ և անգթութեան արմատը խել» (*):

Բայց Մեծն Ներսէս առաջինը չէ, ոչ ալ վերջինը, որ ժողովրդավարական սկզբունքները կը կիրարկէ եկեղեցւոյ և ազգին վարչական գործերուն մէջ: Նոյն ոգին տիրած է հայ եկեղեցւոյ մէջ, սկիզբէն մինչեւ վերջը: Սահակ և Մեսրոպ ժողովրդային լուսաւորութեան հզօր ազդակներն եղան, և չենք յուսար որ գոնուի ուրացող մը այդ հոյակապ գործիչներու ժողովրդասիրութեան:

Էապէս ժողովրդային շարժումի մը գլուխ կեցան Վարդանանք, Յազկերտի ահաւոր հալածանքին դէմ իրենց մղած կորովի պայքարով. շարժում մը որուն եթէ գլուխը կը կանգնէր Վար-

դան՝ համախոհ քաջարի նախարարներով, անոր հոգին ու մղիչ ուժը կը կազմէին Ս. Յովսէփ Կաթողիկոս և Ղեւոնդ երէց, իրենց հոյլ մը անձնուէր եկեղեցական ընկերակիցներով: Սկեպտիկներ կ'ուզէն մեղի հաւատացնել թէ սխալ շարժում մ'էր այդ, և Վասակի ընթացքը շատ աւելի «քաղաքագիտական» էր: Բայց Վասակ և իրեն համախոհ մարմնիչներ կը մնան միշտ, իրենց բոլոր դիւանագիտութեամբ, մինչ Վարդանանք ու Ղեւոնդեանք պաշտօնի են յաւէտ Հայուն՝ իրենց ենթադրեալ սխալովը հանդերձ, որովհետեւ այդ սխալը, իմա, դիւցազնութիւնը, ժողովուրդինն ալ էր:

Եթե՛նրորդ դարու առաջին կիսուն, Յունական-Քաղկեդոնական հալածանքներու միջոցին, Հայ Կաթողիկոս մը, Եզր, Յունաց Հերակլ կայսեր ստիպման վրայ, կը հարկադրուի երթալ Կարին (=Թէոդուպոլիս), ուր Յունաց և Հայոց կարգ մը Եպիսկոպոսներէն (առանց մասնակցութեան բոլոր հայ ազգին) գումարուած դաւառական ժողովին մէջ կ'ընդունի քաղկեդոնականութիւնը, գիւղաքաղաք մ'ամբողջ նուէր ստանալով՝ այդ արարքին ի վարձատրութիւն, և Դուին դառնալով կ'աշխատի նոր ժողովով մը հաստատել իր ընդունած դաւանութիւնը: Բայց իրեն հաւանակարծիք չէր ժողովուրդը, ուստի ամենաբուռն հակառակութիւն կ'ենէ իրեն դէմ, եկեղեցականութենէն և ժողովուրդէն հաւասարապէս, և այնքան խորունկ արհամարհանքի մը ենթակայ կ'ըլլայ, որ իր անունը գլխիվայր կը դրուի Կաթողիկոսներու շարքին մէջ: Բնականաբար իր ծրագիրը

(*) ՊԱՏՄ. ՀԱՅ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ, Մելիքսեղիկ Արքեպի Մուրատեանց:

ջուրը կ'իյնայ, որովհետեւ ժողովրդական չէր, որովհետեւ քաղկեդոնականութիւնն ընդունելով՝ մեռեալ տառ մը պիտի մնար Հայ եկեղեցւոյ անկախութիւնը:

Նոյն ժողովրդային յուշումը՝ ԺԴ. դարուն Գրիգոր Անաւարդեցի և Կոստանդին Պրոնազործ կաթողիկոսներուն դէմ, որոնք յունական և լատինական ծէսեր և վարդապետութիւններ մտցնել կ'ուզէին Հայ եկեղեցիին մէջ, և իրենց օժանդակ ունէին Կիրիլեան թագաւորներու՝ Հեթում Բ.ի և Լեւոն Դ.ի ուժը: Սիսի մէջ գումարուած ժողովին որոշումները, որ նուիրագործումն էին այդ երկու կաթողիկոսներու ծրագրած քաղկեդոնամիւլ դադափարներուն, բացարձակապէս չեղեալ կը նկատուին և անգործութեան կը դատապարտուին, արեւելեան եկեղեցականներու բուն ընդգիծութեան շնորհիւ. որովհետեւ այդ վերջիններուն հետ էր ժողովուրդը, որ պինդ փարած իր Նախնեաց սուրբ հաւատքին և իր ազգային եկեղեցւոյն ինքնուրոյն անկախութեան, առ ոչինչ կը գրէր ուրիշ ամէն նկատում, և կ'արհամարհէր սուր, բանտ, հալածանք և ամէն կարգի նեղութիւններ:

ԺԵ. դարու կէսերուն ի՞նչ էր գլխաւոր մէկ պատճառը Հայոց հայրապետական Մայր Աթոռին վերստին Էջմիածին փոխադրուելուն, եթէ ոչ այն որ տազնապալի պարագաներու բերումով Կիրիլիոյ կաթողիկոսները կ'ընտրուէին առանց հաւանութեան ազգին, և առանց գիտութեան Մեծ Հայոց առաջնորդներուն և իշխաններուն: Կիրակոս Վիրապեցի Էջմիածնի կաթողիկոս կ'ընտրուի՝ Վաղարշապատ

տի մէջ բազմութիւ եպիսկոպոսներու, երէցներու, տանուտէրներու ևն. մասնակցութեամբ կազմուած ժողովին մէջ, որուն մասնակցել չկրցողներուն ալ հաւանութիւնը կ'առնուի գրաւոր կերպով:

Հայ եկեղեցւոյ պատմութեան վրայ նետուած այս հարեւանցի ակնարկն իսկ կը բաւէ հաստատելու ժողովրդավարական ոգին, որ տիրապետող եղած է միշտ մեր եկեղեցական տարեգրութեանց մէջ: Ամէն անգամ որ դաւանաբանական կարեւոր հարց մը յուշուած է, ամէն անգամ որ հիմնական որոշում մը տալ պէտք եղած է Հայ եկեղեցւոյ անկախութեան կամ բարգաւաճման վերաբերեալ խնդրոյ մը համար, եկեղեցականութիւնը գործած է աշխարհական տարրին, ժողովուրդին հետ համերաշխաբար:

Ի՞նչ է Սահմանադրութիւնը, 1848ի յեղափոխութեան լայն գաղափարներով սնած միտքերու ծնունդ այդ կանոնադիրը, եթէ ոչ նուիրագործումը ժողովուրդի մասնակցութեան իրաւունքին՝ ազգային վարչական և եկեղեցական գործերու կարգադրութեան մէջ, եթէ ոչ պաշտօնականացումը ժողովրդային ձայնի գերակշռութեան: Եթէ Սահմանադրութեան հաստատման ժամանակ գտնուեցան ընդգիծմացողներ այդ ժողովրդավարական սկզբունքին, ատիկա արգիւնքն էր ոչ թէ եկեղեցւոյն միապետական սկզբունքներուն, այլ նոյն իսկ Հայ եկեղեցւոյ ճշմարիտ ոգւոյն կամաւոր մուսուլման կամ անգիտութեան, ատիկա արգիւնքն էր ժամանակի ու միջավայրի պահանջումներուն: Ու նորէն,

ԱԶԳ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ

ՅԱԿՈԲ ԿՐԺԻԿԵԱՆ

Ազգ. Սահմանադրութեան հաստատութեան յիմնամեակը որ այս օրեր կը տօնուի, կը վերակենդանացնէ մեր մտքին մէջ բոլոր այն ջանադրութիւններն և աշխատութիւնները որոնք տարուած են զայն հաստատելու համար, այն պայքարները որոնք կատարուեցան անոր շուրջը, իբր նոր գաղափարի մը որ կը սպառնար յեղաշրջել Հայ կեանքը:

Ասիկա նշանաւոր հանգրուան մըն է ոչ միայն մեր Պատրիարքարանի վարչական-մատակարարական պատմութեանը համար, այլ նաև ազգին քաղաքակրթական շարժմանը: Ազգ. Սահմանադրութիւնը մէկ օրէն միւսը ծնած օրէնք մը չէ, այլ դարերու աւանդութիւնէն, միջավայրին փորձառութիւնէն, ու օրինական դարձած սովորութիւններէ քաղուած ու շինուած օրինագիրք մ'է, և իր բոլոր թերութիւններովը հանդերձ, անիկա ոչ միայն առաջնորդ մը հանդիսացած է մեր ներքին մատակարարութեան, այլ նաև տեսակ մը լուսաւորութեան գործի և միջոց, անզգալաբար ներշնչելով հասարակ ժողովուրդին պարտուց և իրաւանց քաղաքացիական գիտակցութիւնը, որ ինչպէս ուրիշ ազգերու, նոյնպէս և մեր մէջը կոչուած էր կատարելու նշանաւոր դեր մը, մղելով ժողովուրդը ինքնագիտակցութեան: Այդ ճանաչողութիւնն և սահմանադրական կարգերու գիտակցութիւնը՝ երիտասարդութիւնը մղեց օր մը ձեռք ձեռքի տալով զանազան ընկերութիւններ կազմելու և կրթական գործին միւսմ տալու, և նպաստելու Հայուն քաղաքակրթութեանը: Եւ մինք կրնանք պարծիլ թէ Արեւելքի մէջ առաջին ազգն եղած ենք, որ եթէ ոչ լիակատար գիտակցութեամբ, գէթ հետեւողականութեամբ մը ընդգրկած ենք սահմանա-

դրական կարգերը, և զանոնք գործադրած:

Այո՛, հետեւեցանք, ատիկա պէտք է ընդունիլ, սակայն պէտք է միանգամայն անվերապահ յայտնել թէ առանց մարդուած և հրահանգուած ըլլալու, Սահմանադրութիւնը գործադրեցինք, կամ կրցանք գործադրել աւելի կամ նուազ թերութիւններով, վասն զի Հայ ցեղը կրցաւ արտադրել իր մէջը մեծ մարդիկ, որոնք կարող եղան նամախմբել իրենց շուրջը մտքի մարդոց դասակարգ մը և հանդիսանալ առաջնորդ ժողովուրդին՝ որ կրցաւ ճանչնալ իր ճշմարիտ բարեկամները:

Մեր Սահմանադրութիւնը ժողովուրդին հեղինակութիւնը չէ: Մեր Սահմանադրութիւնն անհատական նախաձեռնութեան արդիւնքն է. մէկը յղացաւ, քանի մը ուրիշներ զայն գործադրելու աշխատեցան, և ուրիշ մէկ քանին զայն աւելի նպատակայարմար վիճակի մէջ դնելու ջանացին: Գործադրութեան դրուելէ յետոյ է որ միայն վէճը սկսաւ անոր շուրջը, և հոս է Հայ ժողովուրդին արժանիքը, որ կարճ ժամանակի մէջ կրցաւ սահմանադրական մեծամասնութիւն մը ձեւացնել, հակառակ անոր որ առաջին օրերուն — ինչպէս Օտեան իսկ կը խոստովանի — Սահմանադրականք աննշան փոքրամասնութիւն մ'էին:

Այն խմբակին մէջ որ յղացաւ Սահմանադրութիւնը, առաջին տեղը պատմութիւնը պարտի տալ Յակոբ Կրճիկեանի, թրքահայ առաջին քաղաքագէտ պետական պաշտօնատարին, որ Թրքահայոց Սահմանադրութեան առաջին հիմը դրած է, նոյն իսկ անոր հիմնադրութիւնէն տասներեք տարի առաջ:

Ինքը տապալեց Պատրիարքներու միահիծան ու սանձարձակ տիրապետութիւնը՝ Վարչական Ժողովներ հաստատելով իբր համազօր և համախորհուրդ Պատրիարքներուն: Սէրվիլէն տապալեց ամիրայական կամայականութիւնը, զանոնք վտարելով ժողովներէ՝ ժողովուրդին քուէին ենթարկեց առնց ընտրութիւնը: Կրճիկեան հիմը դրաւ, Սերվիլէն զարգացուց, իսկ Օտեան, Ռուսիոյն և Նիկողոս Պալեան զայն կատարելագործեցին, միշտ հեռուէն կամ մօտէն

վայելելով առաջին հեղինակին՝ Կրճիկեանի պաշտպանութիւնը :

Կրճիկեան՝ ահարկու զօրութեան մը դէմ կուռելու պարտաւորուած էր իր առաջին քայլերուն մէջ : Ամենազօր Պատրիարքութիւնը և անոր քով կանգնած ամիրայութիւնը կը ներկայացնէին անմատչելի պատուար մը, որուն վրայէն անցնիլ կարելի չէր : Կրճիկեան ճարպիկ դիւանագիտութիւն մը գործադրեց՝ ամիրայութիւնը ճարտարութեամբ մը Պատրիարքին դէմ կանգնեցնելով, և կառավարութեան առջեւ իր բացարձակ հեղինակութեամբը կանգնող Պատրիարքին առջեւ նոյնքան իրաւասութեամբ երկու ուրիշ դասակարգեր, կրօնաւորները և ամիրաները կանգնեցնելով : Այդ հարուածով՝ Պատրիարքին զօրութիւնը երեք մասերու բաժնուեցաւ, և այս բաժանումն էր որ յարգարեց ճամբան ժողովուրդին տիրապետութեան :

Առանց այս հարուածին, Պատրիարքները, չարունակ պաշտպանուած Ամիրաներէն, պիտի կարենային ընկճել ժողովուրդին ձայնը որ արդէն 1839էն ի վեր սկսած էր իր դժգոհութիւնը զգալի ընել, պայքարի նշաններ ցոյց տալով :

Կրճիկեան այս յաջողութիւնը ձեռք բերաւ անհատական ձեւերեցութեամբը :

Ինքն 1807ին Կ. Պոլիս ծնած էր : Ժամանակին միակ ֆրանսագէտ ուսուցիչը՝ Նզէկեան՝ իրեն ֆրանսէրէնի նախնական ճաշակը միայն տուաւ : Սակայն ինքն հետեւեցաւ նաեւ թուրքերէնի, որ մինչեւ վերջը իր գլխաւոր նախասիրութիւնը մնաց : Որովհետեւ Փրանսերէնի և թուրքերէնի միանգամայն ծանօթ անձեր խիստ սակաւաթիւ էին այն ատենները, Կրճիկեանի լաւագոյն բախտ մը ժպտեցաւ : Կրճիկեան ծանօթացաւ Մուսթաֆա Րէշիտ փաշայի որ 1835ին Բ. անգամ ըլլալով Բարիզի դեսպան կարգուած ատեն, Կրճիկեանը իրեն հետ տարաւ, իբր իր տղայոց դաստիարակ :

Այդ միջոցին Կրճիկեան հետեւեցաւ Սօրպօնի դատախօսութիւններուն, և Րէշիտ փաշայի միջնորդութեամբը դեսպանատան Բ. թարգմանի պաշտօնը ձեռք բերաւ :

1838ին Րէշիտ փաշա Լոնտոն դեսպան

անուանուեցաւ, և Կրճիկեան՝ նոյն դեսպանատան Ա. թարգման : Սուլթան Մէհմետի գահակալութենէն յետոյ, երբ Րէշիտ փաշա արտաքին գործոց նախարարութեան և ապա եպարքոսութեան կոչուեցաւ, Կրճիկեան Լոնտոնի մէջ գործակատարի պաշտօն վարեց :

1840ին երբ Րէշիտ փաշա կը վերադառնայ Լոնտոն և հոն կը յաջողի կնիքել տալ Լոնտոնի դաշնագիրը (1840 Յուլիս 3/15ին), որով Անգլիա, Ռուսիա, Աւստրիա և Բրուսիա, հաւաքաբար կ'երայխաւորէին թուրքիոյ ամբողջութիւնը՝ ընդդէմ եգիպտոսի փոխարքային ռանձգութեանց, Կրճիկեան իբր արտասովոր բանագնաց այդ դաշնագրութեան օրինակը Կ. Պոլիս տարաւ :

1841 օգոստոսին դարձեալ Բարիզ կը դառնայ. իբր Ա. թարգման Բարիզի դեսպանատան : 1843ին Կ. Պոլիս կը կանչուի, վասնզի Րէշիտ փաշա, հին թուրքերու չաբախօսութեանց ենթարկուած, պաշտօնէ ինկած էր : 1843ին Պրուսա կ'այցելէ և այդ տօթիւ չերամբուծութեան տրուած կարեւորութիւնը տեսնելով, Արշադուս Արաւսեանի մէջ կը հրատարակէ միաւսքաբանութիւն մը, զոր յետոյ ընդարձակելով Գրիգոր Ազաթնի և Գէորգ Սթիմարաճեանի օժանդակութեամբ կը հրատարակէ 1845ին առանձին հատորով : Զանազան լըրագրաց մէջ հրատարակած է նաեւ բամբակի, բրինձի և գետնախնձորի մշակութեան, և խոզի, մերկնոսի և ուրիշ ընտանի կենդանեաց տածուած կերպերը ցոյց տուող գործնական ծանօթութիւններ :

Իր Մեսախարանոթիւնը թարգմանուեցաւ նաեւ թուրքերէնի և յունարէնի, և ուր մեծ ընդունելութիւն գտաւ :

Սակայն Կրճիկեան չկրցաւ այս ճամբան յարատեւել, վասնզի 1845—46ին Օսմանեան Պետութեան կողմէ՝ իբր արտասովոր դեսպան՝ Շէքիպ էֆէնտիի, Րէշիտ փաշայի և Սարիմ փաշայի Վիէննա և Լոնտոն ղըրկուած ատեն, Կրճիկեան իբր թարգման հետեւեցաւ անոնց :

1846ին Րէշիտ փաշա եպարքոս ան-

ուանուեցաւ և Կրճիկեան դարձաւ Եպարքոսին թարգմանն ու մտերիմը :

Կրճիկեան Եւրոպայի մէջ պարապ չէ անցուցած իր ժամանակը . լուսաւորութեան գաղափարները ընդգրկած էր և զանոնք իր ազգին մէջ փոխադրելու փոփաք ու կամք ցոյց տուաւ , և նպաստաւոր առիթները շահագործեց իր խոհականութեամբ : Ինքը մտերիմն էր նաև Ճէզայիրլեանի որ իրեն պէս Բէշիտ փաշայի բարեկամութիւնը կը վայելէր իւր փաշային անձնական սեղանաւորը : Ճէզայիրլեան որ կրթութեան մեծ բարեկամ մը եղած է , օգտուած էր Կրճիկեանէն , վասնզի իր Բարիզ զրկած ուսանողներուն վերին հոգատարութիւնն ու խնամքը վստահած էր Կրճիկեանի , որ իր Բարիզ գրտնուած միջոցին մեծապէս օգտակար եղած էր այդ ուսանողներուն :

Կ. Պոլսոյ մէջ էսնաֆներու և ամիրաներու պայքարը ծայր տալ սկսած էր : Կրճիկեան որ Եւրոպայի վարչական կազմը ուսումնասիրած էր , բնական է թէ համակիր էր ներքուստ էսնաֆներուն , որոնց արդէն պզտիկ գոհացում մը տուած էին ամիրաները , Պատրիարքարանի գործոց մէջ անոնց գործակցութիւնը ընդունելով : Սակայն Պատրիարքը որ և է հակակշիռ չէր ուզեր ընդունիլ . և որովհետեւ Բ. Դրան առջեւ ամէն ինչ էր , կարող էր արհամարհել ամիրաներն ալ , էսնաֆներն ալ : Կրճիկեան , Ճէզայիրլեանի՝ Մատթէոս Պատրիարքի դէմ անձնական խնդրոյ մը առթիւ վշտանալէն օգուտ քաղելով , յաջողեցաւ զայն համոզել որ իրեն հետ աշխատի նոր դրութիւն մը հաստատելու Պատրիարքարանի մէջ : Ճէզայիրլեան համոզուեցաւ , և երկուքն ալ Բէշիտ փաշան համոզեցին և ընդունել տուին Պատրիարքին քով երկու խորհրդական ժողովներու անհրաժեշտութիւնը , Բ. Դուռնէն վաւերացեալ :

Այս կարգադրութեամբ , Պատրիարքը առանց ժողովին հաւանութեան քաղցիր տալու իրաւունքէն պիտի զրկուէր :

1847 մայիս 7ին Մատթէոս Պատրիարք արտաքին գործոց նախարար Ալի էֆէն-

տիի էմիրկէնի ապարանքին մէջ անակընկալ կերպով ստացաւ կայսերական հրովարտակ մը , որով կը հրամայուէր իրեն կազմել երկու ժողովներ , Հոգեւոր և Գերագոյն անուններով , մին կրօնական և միւսը աշխարհական գործոց համար :

Եւ երկու օր յետոյ (մայիս 9) կը կազմուէին այդ ժողովները : Այդ կարգադրութեան համաձայն Գերագոյն ժողովի անդամներէն մէկը ունէր առաւելագոյն ազդեցութիւն , վարելով Պատրիարքին աշխարհական խորհրդականի դերը և կը կրէր Լօղոֆէք տիտղոսը՝ նման Յունաց Պատրիարքին աշխարհական խորհրդականին կամ Բ. Դրան աւագ գործակատարին :

Այդ պաշտօնը կը վիճակէր Յակոբ Կրճիկեանի որ զայն վարեց 1847էն սկսեալ մինչեւ 1853 , յօժարակամ աշխատելով , և պաշտպան ու խնամատար հանդիսանալով գրեթէ ամբողջութեամբ Բարիզ դատարարական սերունդին , որոնք իր ջանքերով կը կոչուին զանազան պաշտօններու և կը հրահանգուին : 1853ին Կրճիկեան կ'ուզէ հրաժարիլ Լօղոֆէքի պաշտօնէն , որուն չորրորդ անգամ կը կոչուէր , սակայն կը մերժուի իր հրաժարականը և մինչեւ 1857 իր վրայ կը պահուի այդ պաշտօնը , հակառակ անոր որ 1855ին ստիպուած թողած էր Կ. Պոլսը և դարձեալ Բարիզ դարձած : Իր տեղը իւր տեղակալ կամ փոխանորդ Լօղոֆէքի կը պաշտօնավարէին Սահակ Ապրօ և Գրիգոր Մարկոսեան :

1851ին Կրճիկեան Օսմանեան Ակադեմիային , այսինքն Էնճիւնէնի Տանիքի անդամ կը կարգուի , պահելով Եպարքոսութեան թարգմանի պաշտօնը :

1855ին Բարիզ դարձաւ իրր խորհրդական , և մնաց հոն մինչեւ 1864 , քանի մը անգամ ալ վարելով դեսպաններու բացակայութեանը գործակատարի պաշտօն :

Հոն Բարիզի մէջ օգտակար ըլլալէ չդադրեցաւ Հայ Ազգին : Դարձեալ իր ուշադրութեան առարկայ ըրաւ Բարիզի Հայ ուսանողները , որ ըստ Վիքթօր Լանկուայի (1856 օգոս. 10 թուակիր նամակ) այն տոնն թուով հարիւրի կը հասնէր և կը վայելէր Կրճիկեանի խնամքը :

Նոյնպէս ինքը Բարիզէն չարունակ խախուսած է իր Կ. Պոլսոյ գործակիցները՝ որոնց երբեմն վարպետը եղած էր, և անոնց յաջողութիւնները հեռուէն ոչ միայն դիտած է այլ, և քաջալերած:

Ասոր ապացոյց են՝ սահմանադրական կարգերու թշնամի խմբակի մը կողմէ այն ատենուան Գերագոյն Ժողովին անդամները նախատող ոսանաւորի մը սա երեք տուները:

Կրճիկեանը, նոր վեստ Սարգիս,
Անոնց մտքին մեծ սատարիչ,
Ամէն շաբթու թուղթ կը ղրկէ
Մեր խեղճ ազգին կ'ըլլայ մատնիչ:

Չի մոռնանք այն Շահնազարը (*)
Փասիս է բեհն ու բազարը.
Անոր տէրը դուք լաւ գիտէք,
Վերջը կ'երթայ պիթ բազարը:

Ահա երկու չարածճիք,
Շահնազարեան և չար Կրճիկ,
Ասոնք եղան հիմա գլուխ
Թեղեկրաժով աչա պիւճիւխ:

Սակայն այս նախատինքները չեն զօրած իրենք իրենց բնական ընթացքէն չեղեցնելու եւ կատարեալ յաղթանակը ապահովելու սահմանադրականներուն:

1865ին այլեւս իր յաղթանակը կատարեալ էր, և թերեւս ինքը բողոքովին մոռցուած էր, իր Կ. Պոլիս դարձաւ մեծ ծերունին և անուանուեցաւ Քաղաքագիտական Ժողովի անդամ:

1865 Հոկտ. 15ին կը մեռնի և կը թաղուի Գուրուչէշմէի գերեզմանատունը:

Իր մահէն յետոյ կը գտնուին իր ձեռագիրներուն մէջ Ֆրանսերէն և Հայերէն երկու փոխտոխայութեան զիրքեր: որոնք կը պահուէին իր եղբորը Տօքթ. Անդրանիկ պէյ Կրճիկեանի քով: Ներսէս Պատրիարք — որ լաւ կը ճանչնար Կրճիկեանի դերը —

(*) Կարապետ վրդ. Շահնազարեան որ նոյնպէս 1856է յետոյ Բարիզ է հաստատուած եւ կ'երեւի Թէ բարեկամացած Կրճիկեանի:

ուղեց տպագրել զանոնք, սակայն չյաջողեցաւ:

Թերեւս Սահմանադրական Յիմնամեակի հանդէսներուն մէջ պիտի գտնուի հայ պատմաճանաչ քահանայ մը, որ իրեն պարտք համարի երթալ Գուրուչէշմէ, գտնել անոր գերեզմանը և օրհնել զայն, ասով յիշելու այն մարդը որ մեր Սահմանադրութեան առաջին հիմնաքարը դրած է:

ԱՐՇԱԿ Ա. ԱՂՅԱՆ

ՊԱՏՄԱՔԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Այսօր հաճոյք ունիմք «Տաճար»ի ընթերցողներուն ներկայացնելու նոր դիմք մը, որ միեւնոյն ասեւ անհեւացած դիմք մըն է, աւաղ: Ողբացեալ Տ. Եղիշէ վրդ. Խաչերեանն է, Ասեւ. Դուրեան Մրազանի պիւթի աշակերտ էր անոր անուանակիցը: Արմաշի յորրորդ շրջանի վարդապետներէն, 1901ին ձեռնադրուած, վեց տարուան կարճ ժամանակամիջոց մը միայն ունեցաւ Հայ Եկեղեցիին ծառայելու, եւ 1907ին ի Տէր հանգեաւ վաղագրաւ կեանքով: Հանգուցեալը, որ Ս. Պատրիարքին Իզմիրի առաջնորդութեան օրով անոր ընկերացած էր իր օգնական-առաջնորդի, իր առաջին գրութիւններով իսկ յայտնուեցաւ ամեհեհ խոսմանալից եւ կարողներէն մեկը Արմաշականներուն, եւ շաքաքաքեր «Մասիս»ին մէջ իր առաջին ֆերուածները մեծ հետաքրքրութիւն յառաջ բերին: Ահա այսպիսի համակրելի դիմքի մը յիշատակը տեսականացնելու, եւ միեւնոյն ասեւ հայ բանասիրութիւնը հետաքրքրող մասնաւորութեան մը ճոխացնելու բաղձանքով է որ հրատարակութեան կը տրուի յորդանանը: Արմաշականին վարդապետական լիքը, որ կոչուած է կարեւոր լոյս մը ափեղծու հայ եկեղեցական մասնագիտներու շարքին մէջ նշանակելի դիմք մը բռնող մեծ դիմքի մը, Հայ Եկեղեցւոյ հզօր պաշտպանի մը՝ Սեփական Սիւնեցիի կեանքին եւ գործերուն վրայ, որ անմաւօք մնացած են ժո-

դոլորդի ստուար մեծամասնութեան: Ժողովուրդը պէտք է շաւ ճանկնայ իր բարեւարները. արժանաւոր յարգանքը եւ երախտագիտութեան հարկը մասնաշաղկապ համար անոնց:

ԽՄԲ.

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Ա.

Անհետացող դարերուն վրայ ձգուած հարեւանցի ակնարկ մը՝ բաւական պիտի ըլլայ, ցոյց տալու համար թէ մարդուն յառաջդիմական զնայքն ընդհանրապէս խոչընդոտներու հանդիպած է քան թէ նրպատաւոր պայմաններու: Իրողութիւն մըն է ասիկա՝ որուն պատճառը կը վերագրուի սովորաբար ժամանակին տգիտութեան ու բախտին թողուած պատահարներուն: Արդ՝ խնդիրն այս տեսակէտէն դիտած ատենինս՝ կրնանք սա համոզման դալ թէ երկրի վրայ ապրած բոլոր ժողովուրդներն ալ աւելի կամ նուազ չափով ենթարկուած են խարխալութեան, հաւաքածանքի, բռնութեանց եւ դեռ ուրիշ վախճան նեղութիւններու: Եթէ այդ արգելքներուն հակառակ, մարդկութիւնը կարող չըլլար յառաջդիմութեան մը ձգտելու՝ տարակոյս չկայ որ բոլոր դարերն ամուլ անցած պիտի ըլլային, եւ ո՛չ մէկ ժողովուրդ պիտի չունենար դարերու ընթացքին մէջ նշանաւոր անձ մը իրբեւ գիտուն, իրբեւ հայրենասէր, իրբեւ քերթող կամ իրբեւ մատենագիր:

Դիւրին է ուրիշ մականքերել թէ կա՛յ ուրիշ ոյժ մը, որ դիմադրաւելով այդ աննպաստ պայմաններուն՝ ապրիցուցած է եւ կ'ապրեցնէ ժողովուրդները, շատ անգամ նոյնիսկ հրաշքներ գործելով:

Յարատեւութիւնը եւ աննկուն նկարագիրն է այդ ոյժը՝ առանց որուն կը խանգարի բոլոր գործարանաւորական տնտեսութիւնը ժողովուրդային մարմինն:

Այն ժողովուրդները միայն կրցած են փայլուն էջեր գրաւել պատմութեան մէջ՝ որոնք առանց նկատողութեան ստեղծուած կամ կարեւորութիւն ընծայելու չնային ձա-

խողուածներու կամ արգելքներու՝ շարունակ աշխատած են առանց երբեք ընկերակելու:

Բաց աստի՝ ժողովրդային այս առանձնայատուկ բարեմասնութեան մեծապէս նրպատած է դաստիարակութիւնն ալ: Առանին դաստիարակութիւնը նախապէս պէտք է հիմը դնէ աշխատութեան գաղափարին, եւ ըմբռնել տայ անոր օգտակարութիւնը բովանդակ կեանքին համար: Յետոյ կուգայ դպրոցը որ լրացուցիչ դերը պիտի կատարէ, եւ ամրապէս պիտի հաստատէ մարդոց մտքին ու սրտին մէջ կրթութեան եւ դաստիարակութեան անհրաժեշտ պէտքը:

Արդ, եթէ երբեք համեմատենք շարունակ աշխատող դարացի կամ հեռաւոր ցեղերու բռնութեանց ենթակայ եղող Հայ ժողովրդին հին դարերու մէջ ստացած ուսման ու կրթութեան առտիճանը ուրիշ ժողովուրդներու ունեցածին հետ՝ տարակոյս չկայ որ շատ աւելի ստորին պիտի գտնենք Հայունը քան ուրիշ որ եւ իցէ ժողովուրդի մը ունեցածը: Որովհետեւ Հայ մայրը ժամանակ չէ ունեցած իր մանկան ջամբելու տնային նախնական կրթութիւնը, թշնամի երկաթէ խողխողութեւն երկիւղէն վաղուան լոյսն իսկ տեսնելու շտապութիւնը չունենալով: Նոյն բանը կարելի է ըսել նաեւ դպրոցական դաստիարակութեան համար, որ այնչափ նախանձելի վիճակ մը չէ ունեցած նախնի դարերուն մէջ:

Այսուհանդերձ՝ այսպիսի անձուկ եւ տագնապալից ժամանակներու մէջ անգամ Հայը միշտ վառ պահած է իր սրտին մէջ՝ անշուշտ ցեղային մասնաւոր առանձնաշատկութեամբ մը՝ ուսման ու կրթութեան համար ունեցած բռնն սէրը, եւ յաջողած է իր անյողդողդ նկարագրով գրեթէ միշտ բարձր բռնել իր մտքին մակարդակը:

Մեր ժողովուրդը՝ ինչպէս գրէթէ՝ ամէն դարերում ինկած էր աշխատող ցեղերու իշխանութեան տակ, նոյնպէս ութերորդ դարուն մէջ ինկաւ Աբասեանց իշխանութեան ներքեւ:

Բնական էր որ Աբասեանք ամէն ճիգ պիտի թափէին շատ մը կողմնորով զմեզ ձուլելու համար իրենց մէջ, եւ իրաւացին է

յաջողեցան ո՛չ միայն ազդեցութիւն ի գործ դնել մեր բարքին և սովորոյթնե-րուն՝ այլ մինչեւ անգամ լեզուին վրայ. այնպէս որ եթէ մինչեւ այն ատեն լեզուն կրնար պարզ և յստակ ձեւի մը ներքեւ բացատրել ամէն ինչ, ատկէ վերջը խըր-թին բացատրութիւններ և թարմատար բառերու կոյտեր խանգարեցին զայն և նաեմացուցին իմաստն ու հոգին:

Այս և ուրիշ նմանօրինակ ազդեցու-թեանց ներքեւ՝ գիտութեանց հետամուտ, Եկեղեցիի պաշտպան, աւանդութեանց նա-խանձախնդիր մէ՛կ քանի անձնաւորու-թեանց ապրիւն իսկ մեծ նշանակութիւն ունի պատմութեան առջեւ: Եւ ութերորդ դարը՝ որուն կ'ակնարկենք՝ իր առաջին քառորդին մէջ կ'ընծայէ մեզի վերոյիշեալ երեք յատկութիւններով օժտուած անձ-նաւորութիւն մը՝ Ստեփանոս Սիւնեցի:

Սա ապրած է այնպիսի ժամանակի մը մէջ՝ որ շատ կողմերով աննպաստ էր յա-ռաջդիմութեան, բայց ինք ուսման և գի-տութեան համար ունեցած անյագ տեն-չովը յաջողեցաւ իրեն համար չինել ճշմու-րիտ համբաւ մը:

Այս համառօտ ուսումնասիրութեան մէջ կենսագրական ծանօթութիւններ տա-լէ վերջը Սիւնեցիի վրայ, ըստ կարելոյն պիտի ջանանք ներկայացնել զնա իբրեւ ջերմ պաշտպան Հայ Եկեղեցւոյ և իրրեւ քերթող, յուսալով որ այդ կերպով պիտի կարենանք ըստ բաւականին ի վեր հանել անոր ճշմարիտ արժանիքը:

*
*
*

Ստեփանոս Սիւնեցիի վարուց Պատ-մութիւնը կ'ընէ Ստեփանոս Օրբէլեան արքեպիսկոպոսն Սիւնեաց՝ որ թէ և հա-մառօտ բայց ամիսի ձեւի առից կ'ներկա-յացնէ գրեթէ անոր ամբողջ կեանքը:

Ըստ Օրբէլեանի՝ Ստեփանոս որդի էր Հայոց մեծ մայրաքաղաքին՝ Դուռայ աւա-գեթիցուն՝ Սահակոյ: Օրբէլեանի պատմու-թեան յայտնադէս կ'երեւի թէ աւագերէ-ցը իր որդին առաջին տարիներէն սկսու-հրահանգել և կրթել եկեղեցական ուսմանց և պաշտամանց մէջ: Առաջին անգամ Ստե-

փանոս երբ դեռ փոքր էր, կ'ուսանէր Դուռայ կաթողիկոսարանին մէջ: Երբ չա-փահաս եղաւ և քիչ շատ յառաջ գնաց ուսման մէջ, չուզեց այլեւս հոն մնալ, խորհելով որ ինք տակաւին պէտք ունէր շատ բաներ սովորելու, և եթէ մնար հոն, կը զգար թէ պիտի չկրնար գտնել իր մըտ-քին կարեւոր մտունդը. հետեւաբար ձգեց ու գնաց այն ժամանակին մեծ համբաւ ունեցող վանք մը որ կը կոչուէր Մաքե-նոցաց վանք:(¹) Օրբէլեան սապէս կը նկարագրէ զայն. «Գնայր, կ'ըսէ, ի համ-բաւատենչ և մեծաքանիչ հանդիսարանն, ի հրեշտակերամ կրօնաստանն սուրբ և աստուածաբանակ առաքինարանն Մաքե-նոցաց, առ աստուածազգեաց և սերով-բէստիպ հարանց հայրն Սաղոմ»:(²)

Հոն՝ ինչպէս կ'ըսէ պատմիչը՝ Սողոմոն անուն կրօնաւորի մը, որ մեծ համբաւ ու-նէր իր իմաստութեամբ և խստամբեր վարքովը, աշակերտեցաւ և ինչ որ կրնար սովորիլ՝ սովորեցաւ:

Այս վանքին մէջ բաւական ժամանակ մնալէ վերջը, դարձեալ չկրցաւ յագուրդ տալ գիտութեան համար իր ունեցած ան-յագ տենչին, ու սկսաւ փնտռել աւելի բարձրագոյն դպրոց մը ուր կարենար իր ծարաւը յագեցնել:

Սիւնեաց վարդապետարանը՝ որ Հա-յաստանի մէջ երկու դարերէ ի վեր ամու-նէն համբաւաւոր ուսումնարանը կը համար-ւէր՝ Մաքենոցաց վանքէն վերջը Ստեփա-նոսի թէ՛ հոգեւոր և թէ՛ մտաւոր կրթու-թեան կեդրոնը պիտի ըլլար: Այն ատեն՝ երբ Ստեփանոս Մաքենոցաց վանքէն ել-

(¹) Այս վանքը կը գտնուէր Սեւանայ Ծովուն հարաւային կողմը, որ իր վանականներուն հագած ոչխարեղէն մորթին համար Մաքենեաց կամ Մա-քենոց վանք կոչուեցաւ:

(²) Սողոմոն շատ աւելի նշանաւոր եղաւ երբ յօրինեց «գալայձառացոցիչն տօնից Տէրու-նականաց եւ յիշատակաց մարտիրոսաց զօո-նականն»: Օրբէլեան կը կոչէր զայն «Էզոնոմոս» զոր ոմանք կը թարգմանեն «տնտես»: Բայց այս բառը երբ կարդանք «հեկեմոնոս» = «առաջնորդ» այն ատեն աւելի ուղիղ կ'ըլլայ կարծենք եւ յար-մար Սողոմոնի դիրքին ու պաշտօնին:

ներով մտաւ Սիւնիաց վարդապետարանը, Սիւնիաց եպիսկոպոսն էր Մովսէս, որուն ձեռամբ և ջանքով յիշեալ վարդապետարանը՝ ինչպէս կ'ըսէ Օրբէլեան՝ այնչափ ծաղկեցաւ որ գլուխ նկատուեցաւ «ամենայն գիտնոց Հայոց, և պայծառացեալ դպրովքն որ ի նմա. քանզի որպէս Աթենացիքն ի մէջ Հոսոմոց և Յունաց ճոխացեալ էին և մայր իմաստից կոչեցեալ յիսպանիացեաց աշխարհին Լատին և Հելլէն դպրութեամբ, այսպէս և սոքա ի տանս Թորգոմայ յաշխարհիս Հայոց»։ (Օրբէլեան հտր. Ա. էջ 176)։

Հոս՝ այս գերազանց դպրոցին մէջ՝ Սիւնեցի աւելի եռանդեամբ փարեցաւ ուսման, և այնչափ յառաջդիմութիւն ցոյց տուաւ որ քիչ ժամանակէն իրեն յանձնուեցաւ Ս. Գրքի մեկնութեանց դասախօսութիւնը։

Մովսէս՝ որ ինչպէս ըրինք՝ եպիսկոպոսն էր Սիւնիաց, գնահատեց անոր արժանիքը, և եկեղեցական տասնամեակներն ալ տալով՝ անցուց ի կարգ վարդապետաց։ Այս կերպով Սիւնեցիին առջեւ կը բացուէր շատ աւելի ընդարձակ ստացարէզ մը յառաջդիմութեան բոլոր այն ուսմանց մէջ զորս կը սիրէր։ Ս. Գրքի մեկնութեանց դասախօսութիւնները մեծապէս նպաստեցին իր զարգացմանը։ Եւ ինք բնական էր որ այդպիսի միջավայրի մը մէջ միայն զատախօսութիւններով պիտի չգոհանար, այլ իր պարապոյ ժամերուն մէջ զբոյս պիտի առնէր իր բոլոր հմտութիւնը զոր քանդարած էր յընթաց ժամանակաց։ Աւ իրաւցընէ Ստեփանոս Սիւնիաց վարդապետարանը գտնուած միջոցին թողած է Ս. Գրաց վերաբերեալ գրաւոր մեկնութիւններ, զորս յիպոյ պիտի յիշենք։ Ասոնցմէ զատ գրած է նաեւ ուրիշ թուղթեր՝ որոնցմէ մին է հաւանաբար առ Եպիսկոպոսն Անտիոքայ գրած թուղթը՝ որուն վաւերականութեանը մոտին զօրաւոր ապացոյցներ չկան թէ և, բայց կ'արժէ լուրջ քննութեան առարկայ դարձնել զայն՝ կրօնական և պատմական կրկնակ տեսակէտներով։

ՍՏԵՓԱՆՈՍԻ ԹՈՒՂԹԸ
ԱՌ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՆՏԻՈՔԱՅ (¹)

Այս թուղթը հաւանաբար պատասխանն է յիշեալ եպիսկոպոսին հաւատոյ մասին գրած մէկ թուղթին՝ որուն բնագիրը դժբախտաբար չունինք ձեռքերինս։ Ստեփանոս իր այս թուղթին մէջ ոգի ի բռին պաշտպան կը կանգնի Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութեան և ծիսական աւանդութիւններուն։

Դիտելի է սակայն որ բաց ի մի քանի պարագաներէ՝ որոնց ստուգութիւնը դիւրին է պատմականապէս հաստատել, կը խօսի նաեւ այնպիսի դէպքերու վրայ՝ որոնց պիտի չուզէր ոեւէ մէկը դիւրաւ հաւատք ընծայել։

Այսպէս, իր յառաջարանական մասին մէջ, առաջին պատեհութեամբ կը խօսի Հայաստանի՝ Թադէոս և Բարթոլոմէոս առաքեալներուն ձեռքով Քրիստոսի ճշմարիտ հաւատքը ընդունած ըլլալուն վրայ. յետոյ Սուկաւեանց՝ Հոգւոյն ազդմամբ Հայ աշխարհին ապագայ լուսաւորութեանը համար կատարած մտղթանքին արդիւնք կը նկատէ Ս. Գրքի մեկնութեան թադէոսի առաքելական ավոտին, և կը ներկայացնէ զԳրքի իբրեւ ծնողը Հայ աշխարհին ըստ Աւետարանի և բացողը ճշմարիտ Աստուծոյ դիտութեան լուսոյ դրան։ Յոյց կուտայ թէ ինչպէս ուղիղ և անորաւ պահեցին Հայք իրենց հաւատքը անոր ճգնողական աղօթքին շնորհիւ, և իրաւամբ կը պարծի հերձուածողներու բռնութենէն չվարուելուն, և սակաւ հօտ մը, փոքրիկ փարախ մը ըլլալով հանդերձ՝ զայլերէն անկոխելի մնալուն վրայ։ Որովհետեւ, կ'ըսէ, մենք ինչ որ լսեցինք ու սորվեցանք մեր Լուսաւորչէն, նոյնը պահեցինք և կը պահենք հոստատուն և ուղղափառ հաւատքով։ Այսպէս, մատնանիշ ընելէ վերջ Հայ ժողովուրդին հաստատութիւնը իր հաւատքին մէջ, կուգայ ուրիշ պարագաներու։

ԵՂԻՇԷ ՎՐԴ. ԽԱՅԵՐԵԱՆ

(¹) Յայտնի չէ թէ ո՛վ էր Անտիոքայ այդ Եպիսկոպոսն։ Անտիոքայ Եպիսկոպոսներէն Ասորիներ ալ կան, բայց կերելի թէ Յունաց Եպիսկոպոսն էր այն որ ուղղուած է այս թուղթը։

ՀԱՅՈՑ ԶԱՏԻԿԸ

«Քրիստոս յարեալ ի մեռելոց, եւ յարուեալսն իւրով մեզ զկեանս պարգեւեաց:»

Բ.

Զատիկը ամէն Քրիստոնէի համար թէեւ միշտ յիշատակելի ու պաշտելի է, բայց մեզ Հայերու համար քանի՜ առաւել, երբ մեր դարաւոր պատմութիւնն ու տառապալից տարիները գերազանցօրէն կը յարմարին ու կը պատշաճին աւագ շարժումն մը ողջ տառապանքին զորս կրեց Անտանիլին տա- նինելիօրէն, Անճառելին ճառելիօրէն: Տօն մը, սուրբ յիշատակ մը որ կ'սկնարկէ մարդկային փրկութեան ու ազատութեան խաչին ու յարութիւնովը. ու մենք իրա- կան ու եղական իրաւունքով մը պէտք չէ՞ որ սխրալի յօժարութիւնով ու մերը եղա- ծի հպարտութիւնովը նոյն անձնուիրու- թեան խունկով և մոմովը, այն զոհողու- թեան սրտովը ու հոգիովը տօնենք. զի անց- եալով ու ներկայով ու ճակատագրով կը նմանինք նոյն ատենի տառապող ու դեղե- րող, խոշտանգուող ու արհամարհուող աղ- զին, սպասող մը՝ ազատութեան: Բայց մեծ ուշադրութիւն, չլինի որ ազատութիւնը մեր իսկ ձեռքերովը խաչինք... Անգամ մ'ալ գնանք խորը մեր պատմութիւննե- րուն, և անանկներուն որոնք արիւնոտ էջեր հրամցուցին և պատմական ու պատուական ազգ մը ողջակիզեցին, դիակնացուցին, քսան դարերու պատկառելի ազգի մը պատ- մութիւնը, սոհմայութիւնը քստմնելի փուշերու մէջ թաթխեցին. ամենի ամբար- տակներ, ճարտարուեստի բուրգեր, ծաղ- կոտ ու ծիծաղկոտ երկրամասեր, պատկա- ռոտ ու տեսքոտ քաղաքներ, գիւղերով ու շէնքերով գաշտեր, գմբէթներով ու կոթողներով առճարներ, գիրքերով ու հնութիւններով լեւի լեցուն վանքեր, սուրներով լեցուն կեանքեր փճացուցին:

Հայուն չարձարալի, արհաւիրալի, գե- րութեան ու ստրկութեան պատմութիւնը

չստ հին է, վէրքն ալ նոյն քան խորունկ ու դարձանն ալ այնչափ դժուարին: Իր աւերումի, փճացումի, քանդումի, տառա- պանքի, մորթատումի, լլկումի, ձուլումի արձանագրութիւնները դարակներ ու դրու- դարաններ կը լրացունեն: Ո՞ր դար իր արժ- ձանագիրը չունի և ո՞ր տարի իր յիշա- տակները. ո՞ր հնախոյզը, ո՞ր հնագէտը ա-ւերումի, ջնջումի յուշերը, ազգերու եւ ցեղերու բարձումը, մայրաքաղաքներու խոպանացումը, գիտութիւններու ու ար- ուեստներու թաղումը պեղումներով ու պրպտումներով չէ երեւան բերեր. և նոյն երեւումներն ու շարունակութիւնները դեռ երէկուան չէն պատկանիր այնչափ թարմ: Ծրագիրը նոյն, խորհուրդը, գործելու եղա- նակը նոյն, և միջոցները աւելի խստօրէն ու բրտօրէն. ջնջել, արմատէն չորցնել, ծա-ղիկը փթթումէն թօշնեցնել, ծիծեղը իր բոյնէն, կռուակը իր երկրէն, ծառը արմա- տէն, ատունը հիմէն, գիւղերը քակչութե- նէն, քաղաքը գեղեցկութենէն, արուես- տը բազկէն քանդել, խախտել, քրքրել, Հայը՝ այլն բաժան բաժան ընել: Ու ահա աւելցուր վրան իրար չհամարալը, հախա- տելը, ատելն ու անուանարկելը, զաւն ու նախանձը, անխոհմ ու աննպատակ ա-րարքները, և կ'ունենաս ոչ մի բան ու երեւոյթ միւսիմարական:

Երբեք մը իրեններովը այս ամենն բրաւ քայլ առ քայլ անլուր վազքերով, անկա- յուն փութկոտութիւնով, և շատ անգամ- ներ ու միշտ հրէշաբար ու վրիժաբար, ա- նանկ որ Փարսեաններուն վրայ կիտրոն քամելու չափ: Աներեւակայելի հնարք- ները, դիւային տանջանարանները, անասելի անբարոյութիւնները, անպատկառ լրբու- թիւնները չեն կրնար հաւասարիլ ու չա- փէն ալ անցնիլ այն օրերու կատաղած խու- ժանին և զայնս վարող փոքր ու մեծ բրու- նապետներուն ու վագրերուն, որ Անմեղի մը դէմ զինուած ու լարուած, բրինձի ու կրնար ստեղծել տպախտ մարդկութիւնը. և երբ Աստուծոյ մը այսպէս, հապա՛ վի- բաւոր, ինկած ու փողոտուած ժողովուրդի մը որչափ:

Հայ ժողովուրդ, դո՛ւն, մանաւանդ

դո՛ւն՝ յիշէ թէ ազատութեան համար որչափ ճիւղան ու շիւան երիտասարդներ, քանի՛ ծաղկած ու յառաջացած տուններ, ափնչափ սիրալի ու սիրելի ծնողներ, նոյնչափ վարժ ու փորձ պապեր, առոյգ ու զառնուկ պատանիներ, անթիւ կոյսեր ու յոյսեր, անհամար տնչէն ու համչէն մայրեր զո՛հ ու զո՛հ տուիր, մատաղ ըրիր միշտ միեւնոյն յոյսով:—Մեռնիլը ապրիլ է, մա՛րդ յարութիւն է:

Հայ ժողովուրդ, ազատութիւնը ամէն ազգերու փորձաքարն եղած է, ու քուկդ ալ հոգ պէտք է ցոյց տաս, նման այլ ազգերու, թէ այդ փորձաքարէն պէտք է ճանչցուիս իրր արժէքաւոր քար մը: Այդ բարձրութեան հասնելու համար, նման ճըշմարտին, պէտք է կեանքիդ ու ընթացքիդ, գործիդ ու պարտաւորութեանդ մէջ դիւցազնութիւն ցոյց տաս նոյն խոհականութիւնով և միեւնոյն լրջութիւնով, գործին հանդէպ խորունկ գիտակցութիւն և հմուտ հայեցողութիւն, սուր դիտողութիւն և ճշմարիտ դատողութիւններ ցոյց տալով:

Հայ ժողովուրդ, առջեւդ թաշին ճամբան է քառաթեւ. յարմարագոյնը պէտք է ընտրես, Բեթելայ սարէն պէտք է բարձրանալ մինչեւ Գողգոթա, թէեւ այդ բարձրութիւնը թաշի շալակով կ'ելլուի, ու նաեւ պահակով, ու այդ պէտք է լինի քեզի համար Ս. Գիրքը: Սա քեզի ցոյց պիտի տայ ուղիւր, ճշմարիտը, որ կը տանի ապահովաբար ի կեանս, դէպի գեղեցիկը, ազնիւը, արդիւնաւորը, օգտակարը, մաքուրը, առողջը, սոհմայինը, ու մինչեւ ազատութեան բարձունքները: Ազատութեան լերան վրայ գրուած քարետախտակները պէտք է քու օրինադիրքդ կաղմնն, ու եթէ ատկէ դուրս ուրիշ օրէնքներու քայլես, անկումդ շանթալի պիտի լինի, ու աղգերու մէջ ջախջախումդ վերջնական:

Հայ ժողովուրդ, միայն Յարութեան ճամբէն քալէ ու Յարուցելոյն նայէ ու Անոր թաշին ճամբան ընտրէ, այն մեծ զոհողութիւնը, ճշմարիտ անձնուիրութիւնը, կատարեալ եղբայրսիրութիւնը, ուսկէց կարկառ բարձրացած է Ազատութեան բըլուրը ինչպէս Գողգոթան:

Հայ ժողովուրդ, բարոյական հիւանդութիւններդ, ներքին աղտերդ, կեանքիդ ախտերը, որոնք կճեփած են ու շարքերը դարեւորած մաքրել սկսէ, լուալ ջանա՛, սրբելու փութա՛, բաւէ չտեսնելու տալ և մոռնալ ամենը և քուկինդ ուրիշին բեռնաւորելու, անոր վերագրելու անագնիւ ճիգերը թափելու, և փրկութիւնը, յաջողութիւնը ուրիշներէն սպասելու գէշ ու նախութիւններն ա՛լ մէկդի դիր. ամէն մէկը իր անձէն սկսի պարտաւորութիւններուն, իւրաքանչիւրը իրմով գայ հասկացողութեան, ու ամբողջութիւնով այդ հասկացողութեան հրապարակին մէջ բարձրանան դէպ ի գագաթ Գողգոթայի: Բայց երբ կէս ճամբան կուի, սկսումին մէջ վէճ, մտածումի վայրկեանին գաղափարի հակասութիւն, զգացումի նուազութիւն լինի, գործոյն մէջ անշուշտ ձախող ու անյաջող պիտի լինիս:

Հայ ժողովուրդ, վնասներուդ շարքը և գերութեանդ շղթայքը դուն հիւսեր ես, դուն դարձներ ես ու դեռ կ'օղակաւորես, վտանգներ դիզեր ես, փորձութիւններ լեռնացուցեր ես, ու նորէն թոյլ կուտաս այդ վիճակիդ շարունակութիւնը. չէ՛ պատմութիւններու շարքը տխուր էջեր պիտի թողու իր ետեւը և ապագայ հոգեբաններու ուսումնասիրութիւնները պիտի տողեր գտնեն մատակարարուած նոյն տխուր ու անմխիթար երևոյթներէն ու պատկերներէն, և դրուագներ ինկածութեան, առնադրկութեան, լքումի ու վնասումի, նկունութեան ու դասալքութեան, տոհմայնութեան ջնջման ցեցեր ու ուտիճներ:

Հայ ժողովուրդ, ցոյց տուր անգամ մը այն կորուստ ու կամքը, անձնուիրութիւնն ու յօժարութիւնը որպէս ազատութեան ռահանորդը, կտաւոյնատին առջեւ վիզ երկարող հայրենասէրը, թաշին վրայ ձեռք ու ոտք տարածող աշխարհի յաղթողը. բայց եթէ քու մէջդ կայ այն անհուն սէրը, աննառն սէրը, աննիջ սէրը որ գործէ գործէ մինչեւ թաշին մահուան առջեւ ա՛լ: Հերի՛ք է նենգդ ու դաւդ եղբայրներուդ դէմ, հերի՛ք է զրկանքդ ու խարդաւանանքդ

քուկիներուդ դէմ, հերիք է օտարամոլութիւնդ ու գաղթումդ հայրենիքիդ դէմ, հերիք է սառ ու պաղ անտարբերութիւնդ կրօնքիդ ու հաւատքիդ դէմ, ու նոյնչափ հերիք է անձեռներէյ ոգիդ, անկոյս սպասումներդ սա ազատութեան օրերուն դէմ. լարուէ, արուէ, հրահրուէ: Խնչ է այս անմխիթար վիճակդ և լացդ ու կոծդ: Եղբարմայրի դեր ինչո՞ւ կը ստանձնես. արիւնքութիւնով ու յանդգնութիւնով, երբեմն խղճախաբար հրապարակ իջիր, երբ անկաշկանդ ձեռք մը ունիս և անկապ լեզու մը, ու գործածէ շինութեանդ ու բարօրութեանդ. դուն քու մէջդ կաշկանդումներ մի՛ ստեղծիր, ու ոչ ալ խաչափայտ՝ որուն վրայ ձեռքովդ գամնա ազատութիւնը, այն՝ որ հազար զոհողութիւններով ու այնչափ կեանքերով ձեռք բերիր: Շահի ու փառքի տենչանքները, երեւնալու, յաւակնելու փափաքները, յոխորտանալու ու գոռոզանալու բաղձանքները թող քեզ քու նուիրական պարտքէդ ու գործէդ չհեռացնեն, որոնք ազգ մը, ժողովուրդ մը աշխատեցնու կը ծառայեն:

Հա՛յ ժողովուրդ, ազատութիւնը հոչակելու համար պէտք է գիտնաս թէ մինակ բռնակալական ու կառավարական չլիառնալիքու հանդէպ հռչակուելով չէ կարելի ունենալ իրական այն ազատութիւնը որ աշխարհի յաղթումով հռչակուեցաւ. այլ քու կիրքերուդ, գէշ ունակութիւններուդ, ստոր բարքերուդ, անբարոյ մտածումներուդ, անապեխ նկարագրիդ, յեղիւղուկ բնութարանդ, ետամոլ բնազգներուդ, նախանձոտ քինախնդրութեանդ, անմխիթան ոգւոյդ, անհաշտ ընթացիցդ, անտէր արտիդ, թոյլ ու յոյլ քայլերուդ, նենգ ու մեղկ վայելքներուդ դէմ ալ պէտք է հռչակես ազատութիւնդ, որ ամբողջ ազգ մը ազատած լինի: Յեղի մը, ազգի մը նկարագրի տոկունութեան, կեանքի չարքաշութեան, գործերու մէջ ձեռներէցութեան, բարձրութեան, հայրենասիրութեան ջանացողները պէտք է լինին աւելի մտաւորականները, ըլլան կղեր թէ աշխարհական, ըլլան ուսուցիչներ թէ հրապարակագիրներ, կուսակցականներ թէ ո՛չ, ամենը պէտք է


իրենց դերին մէջ հմուտ, դիտակ, լուրջ, խոհեմ, խոհակամ, մաքուր, սուրբ, աշխիւ, ջանասէր, լինին խոնարհ, ընկերասէր, և միշտ դիտակից իրենց վեհ պաշտօնին ու նուիրական պարտաւորութիւններուն, ժողովուրդի այնչափ կենսական նոյնչափ այժմէական գործերը վարեն նոր թափով, ամուր հաւատքով, տան նոր թախչք, նոր կեանք, նոր ոգի ու սուրբ հոգի, որ չէ թէ խանձարուքին մէջ մարի, փթթումին թօշնի, դեռ ճիգին ու սկսումին մէջ թաւազլոր ինկնի ու շատ անգամ ինքնագլոր:

Հա՛յ ժողովուրդ. Յարութեան աւետիսը տանք իրարու որ ազատութեանն է, կեանքինն է. շնորհաւորենք մէկըմէկ. — Բրիստոս Յարեաւ ու Յարութիւնովը մեզի կեանք պարգեւեց: Անոր յարութիւնը քուկդ է, կեանքդ է, ոգիդ է, այդ աւետիսը, շնորհը, տունդ տար, դրացիներուդ քայլէ, բարեկամներուդ պարգեւէ, ընկերներուդ շնորհէ, ողջոյն ազգիդ սորվեցուր Յարութեան վարդապետութիւնը, աշակերտեցուր ամենին թէ, «Բրիստոս Յարեաւ ի մեռելոց և Յարութեամբն իւրով մեզ զկենդան պարգեւեաց»:


Գ. ՎՐԴ. ԱՍԼԱՆԵԱՆ

Խորհրդ


ՍԱՍՈՒՆԻ ԿԵԼԵԷ-ԿԻՒԶԱՆ ԴԻՒԴԻՆ ՄԷՋ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԸ ԲԱՑՈՒՄԸ Կ'աւետէ մեզի Անատոլուի Օսմ. Երկաթուղւոյ պաշտօնէից Ազգօգուտ Միութիւնը, խորհրդութեանն ուղղում չընդերսականով մը: Առաջին անգամ ըլլալով քաջաւորած այդ վարժարանի ազգաս յայտ ունիմ աշակերտներն արդէն սկսած են կանոնաւորապէս դասերու հետեւիլ, և վարժարանը, որուն 4-5 տարուան չընդմիջ տրդէն նիւթապէս ապահովուած է, կը գտնուի Մշտ պատուական առաջնորդ Տ. Ներսէս Եպիսկ. Խաւրախանեանի վերին հսկողութեան տակ: Շնորհաւորելի են նոյն արդարեւ Ազգօգուտ Միութեան եռանդուն անդամները, իրենց ջանքերուն համար, որոնց ստաւել ևս արդիւնաւորումը և ընդլայնումը ազգայնոց նիւթական քաջաւորանքէն կախում ունի:




ԱԶԳԱՅԻՆ ՄԱՀՍԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԷՆ



ԳՐԻԳՈՐ ՕՏԵՍՆ



ՆԻԿՈՂՈՍ ՊԱԼԵՍՆ



ՏՈՒՐԻ ՆԱՀԱՊԵՏ ՌՈՒՍԻՆԵԱՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՕՆԸ

Հանքարձանի տունն է: Զիքենեաց լեռան
Դեմքերն ու դեպքեր անուշ, անկունան
Կը յիշեմ: Յիսուս աշակերտներուն
Խոստումներ կ'ընէր քանկագին, սիրուն:

Կը յիշեմ. երբոր քաջած իր ձեռքեր,
Այդ պարզուկ մարդերն գործով կ'օրհնէր.
Յանկարծ վերացաւ Ան արագ արագ,
Դեպ ի կապուտակ երկինքը շիտակ:

Մինչ ձկնորսներ պիշ նայէին անբարք,
Կը յիշեմ, անպ մը քարակ ու անգայք,
Ծածկեց Արծիւն այն իրենց աչքերէն:
Եւ անա երկու մարդիկ լուսեղէն,

Հսկն. «Ո՛վ մարդիկ, ինչո՞ւ կը նայիք,
Ապշած դեպ ի վեր այդքան հիացիկ.
Այդ Յիսուսն որ այդ անպերով կ'երթայ,
Անպերով այսպէս օր մը պիտի գայ»:

Զօրքեր՝ Յիսուսի ինկած ետեւէն,
Թշուա՛ն ու հասան երկինքն ոսկեղէն,
Ու ըսին. «Իշխա՛նք, շուք քաջի՛ք դրոներ,
Սա ինքն է փառաց քաջաւորն ու Տէր»:

Բացուեցան դուռներն յաւիտեական.
Մըտա՛ւ յաղթական՝ փառաւոր Արքան.
Հուսանիւք ոգիք, անմահ Սերովբեանք,
Խանդով մատուցին պատիւ ու յարգանք:

Ու հիմա նըստած աչ կողմը իր Հօր,
Պարզեւներ կ'առնէ մեզի հաւար նոր,
Որ երբոր օր մը երթանք երկինք մեկ.
Մեզի սայ զանոնք, եթ' հըրճիւ երգենք:

ՅԱԿՈԲ ԱԼԹՈՒՆԵԱՆ

ՆՈՂ Ե ԱՍՆ

Մասք. ԻԱ. 11

Կան որ անփոք քոյլ ու անհոգ՝

Մեռաւային շրնոհարեր

Վըսկն գործին հոգեւորոգ՝

Կը հարցընեն շա՛ն անսարքեր.

«Ո՞վ է աս»:

Կան որ ոգւով մ'անարգական
Նազովրեցի այս մարգարէն
Բնաւ յեն հաւնիր, կ'ասեն այ զԱյն,
Կը հարցընեն քայց դէռ նորէն.

«Ո՞վ է աս»:

Կան որ հեզնոս ծիծաղով չար՝
Նախանձի քոյնն սիւսերեւուն մէջ,
Թեւէ դժկամ ու անյօծար
Կը հարցընեն նորէն անվերջ.

«Ո՞վ է աս»:

Կան որ միայն հեռաբարձի
Ու գիտնալու տեղէն մղուած՝
Թեւէ անփոք, անկարեկիր՝
Կը հարցընեն համակ կասկած.

«Ո՞վ է աս»:

Կան որ յոյսովք փրկութեան
Օրորուած են շա՛ն ժամանակ,
Դիմելու գի՛րկը փրկչական,
Կը հարցընեն հոգի համակ.

«Ո՞վ է աս»:

— Իսայայի փրկիչն է ան
Իսպաղուքեան իշխան հըգօր,
Մեծ Առաջնորդը մարդկութեան
Փառք ու պատիւ ըլլայ Անոր,
«Ինքն է փառաց քաջաւոր»:

Բերա ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

ՇԱՐԱԿԱՆԸ ՅԱՆԳԱԻՈՐ

ՈՐԳ ՏՆՎԱԿԻՑ(*)

(ԳՐԱԲԱՐԷՆ)

Աստուածորդի, որ Բու մահուան
Եղանք հաղորդ մեկն՝ անարժան,
Արժանացուր մեր հոգիներ
Որ քու հոգւոյդ ըլլա՛ն պատկեր,
Փառաց արքայ, վեհաշուք Տէր:
Բեզ քող երգեն արքոց ժողով,
Երգ հոգեւոր հոգւով, արտով:

(*) Համբարձման շարժումն մէջ ամէն իրի-
կուն իբրեւ «Համբարձի» երգուող մարգարիտ շա-
րական մը, հոյակապ էջ մը հայ կրօնական բա-
նաստեղծութեան, որուն աշխարհաբարձ՝ յանգա-
ւոր՝ մասնաւոր-հաճոյքով կը ներկայացնենք «Ճա-
նար»ի բարեպաշտ ընթերցողներուն:

Հին մարդն ըրիր Քեզ խաչակից
Ու մարեցի՛ր մեղի՛ն սուր կի՛ն.
Սուրբ հաչուլը կենդանաւար,
— Որուն վրայ Դուն մահացար —
Մահէն նըսեմ մեզ փրկեցիր.
Եւ քու արեան կարմիր շիթեր
Գինովցուցի՛ն այս ճիւղեր.
Քեզ թող երգեն եւն.:

Աստուածային մարդեղութեան
Սուրբ մարմննոյ ու սուրբ արեան
Մեզ՝ անազններս ըրիր հաւսար,
Քու վեհ սիրոյդ, գութիդ հաւսար
Զոհեղով քանկ մարմնիդ Քու Հօր,
Զերդ պատարագ անուշաբոյր:
Հուսարողոքոյ, ձիւն անպերով
Հաւքարձա՛ւ՝ քեր՝ Հայրիկիդ քով.
Թայեւրեցար իշխանութեանց
Եւ պէտքութեանց, վերին զօրաց,
Որք հիացած «Մ՛ի է, ո՛վ Սա,
Որ Եդովէն մեզի կուգայ»
Կը հարցնէին հեռախօսի:
Եկեղեցիդ սիրալիր
Իմաստութիւնդ քաղնապատիկ,
Ուսան անոնք հաւիկ, հաւիկ:
Քեզ թող երգեն եւն.:

ՅԱԿՈԲ ԱԼԹՈՒՆԵԱՆ

ՕՐՈՒԱՆ ՏՕՆԵՐԸ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԱՍ ՎԻՃԱԿ

Ե Ի

ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԴ

Հինգշաբթի, 27 Մայիս, Հայ. Ս. Եկեղեցին տօնեց Յիսուսի Համբարձումը: Աստուածամարդուն հրաշափառ Յարութիւնէն ետքը, — որ կրօնական բանաստեղծութեան հրաշալի էջեր ներշնչած է մեր երանաշնորհ նախնիքներուն, — Համբարձման յիշատակը, լրումը անոր փրկագործ տնօրինութիւններուն, կուգայ ամենաբարձր մտածումներու առաջնորդել տուր խոկումներու տրամադիր հոգիները: Այդ իսկապէս հրաշալի իրողութիւնը՝ նոր ապացոյց աստուածային ա-

հաւոր զօրութեան, հաւատացեալին կը թելադրէ երկիւղած խոնարհութեան և խորունկ երախտագիտութեան հառաչ մը՝ դէպի այն հզօր կարողութիւնը, որ անհուն գթութեամբ իջեր էր վար՝ կորսուած մարդկութիւնը փրկելու, մեղքին խորխորատին մէջ գահավիժած արարածները սրբելու, մաքրելու, մօտեցնելու զանոնք իր գերերկրային բարձրութեան: Ան էր, մեղքերը սպաննող Փրկիչը, որ կը համբառնար, իր հզօր զօրութեամբ կը վերադառնար բարձր, վսեմ ոլորտներու մէջ, Ան որ գերեզմանէն ելաւ, դժոխքը կործանեց, և յաղթական փառքով դուրս եկաւ սատանային դէմ մղած պատերազմին մէջ, և «Ել ի Քերովբէս, և թռեաւ, սլացաւ նա ի թեւս հողմոց»:

Այս տօնը, ինքնին տօն մը հոգիի բարձրացման, պէտք է նորշնչարան մ'ըլլայ Բրիտանիային, իր կեանքը վեր բարձրացնելու աշխարհային ճղճիմ մտածումներէ, արհամարհելու ինչ որ վարն է, արհամարհելու ստորնաքարչ կիրքերը, գձուձ հաշիւները, չնչին, անցաւոր շահերն ու հաշիւները՝ համեմու համար աստուածային կեանքի մը փառքերուն, որուն կրնանք առաջնորդուիլ՝ անհատական եսապաշտութեան դրդումներէն հեռանալով կամքի զօրեղ ճիգով մը, և ապրելով բարի Բրիտանիայի մը կեանքը, աւետարանական սիրով առլցուած հաւատացեալի կեանքը, ճշմարտին, գեղեցիկին և բարիին իտէալ պաշտումին նուիրուած կեանքը:

Այդ կեանքը — ինքնին միջոց մը հաւատացեալն առաջնորդելու յաւիտենական ճշմարիտ կեանքին —, պիտի կրնար զմեզ այս աշխարհին մէջ ալ անուշ երջանկութեան մը հասցնել, առիթ ընծայելով մեզի՝ պարտականութեան կատարումի խղճի գոհունակութիւնն ունենալու, ընկերսիրութեամբ, և հանրային շահուն՝ անհատական շահէն գերադասութեամբ, տիպար, յարգուած ու նոյն իսկ պաշտուած մէկը դարձնելու զմեզ մեր նմաններուն մէջ:

Ահա՛ այն ատեն միայն հասկըցած պիտի ըլլանք Յիսուսի Համբարձման խորունկ նշանակութիւնը:

* * Վիճակը, անյիշատակ ժամանակներէ ի վեր լծորդուած Համբարձման տօնին, ազգային հանգամանք մը առած է մանաւանդ գաւառներու մէջ: Հայուն անգիր դպրութիւնը լեցուն է Վիճակի կամ քախտի հանդէսներու նուիրուած քառեակներով: Այդ հանդէսները, որ մանաւանդ մայրաքաղաքին մէջ գրէթէ կորսնցուցած են իրենց նշանակութիւնը, ինքնին կարելի է նկատել բարացուցական իրողութիւն մը, ուր անհատը կ'ուզէ իմանալ ապագայի գաղտնիքները. ըստ ոմանց՝ վիճակ ձգելու կամ թախտը գուշակելու սովորոյթը ծագում առած է Յուդայի տեղ վիճակով նոր առաքեալ մը ընտրելու իրողութենէն, որ կը պատմուի Գործք Առաքելոցին մէջ: Ուրիշներ հայ հեթանոսական սովորոյթ մը կը նկատեն, որ պատշաճեցուած է Համբարձման տօնին, ինչպէս Միհր չաստուածին տօնը՝ Տեառնընդառաջին, կամ Նաւասարդի տօնը՝ Ա. Աստուածածնի Վերափոխման տօնին: Այսպէս թէ այնպէս, ազգային վաղեմի սովորոյթ մ'է որ կը շարունակուի, և իբր այն սիրելի պէտք է լլայ մեզի:

* * Երկրորդ ծաղիկազարդ.—Համբարձման յաջորդող Կիրակի օրը, Հայ Եկեղեցին կը կոչէ Երկրորդ Ծաղկազարդ, այն աւանդութեան համաձայն թէ Ս. Գր. Լուսաւորիչ երբ խոր վիրապ կը գտնուէր, երկնային այցելութեամբ կը սփոփուէր: Իր պէտքերը կը հոգար չորրորդ դաւէն հրեշտակ մը, որ ամէն օր կ'այցելէր մարմնով հրեշտակին, այն է Ս. Գր. Լուսաւորչին: Օր մը հրեշտակը կը խերանայ իր պարտականութեան մէջ, և երբ յաջորդ օրը Ս. Գրիգոր պատճառը կը հարցնէ, պատասխան կը ստանայ թէ մեծ ուրախութիւններ կ'ըլլան Զուարթնոց սպարհին մէջ Յիսուսի Համբարձման տօնին առթիւ, և թէ ինք ևս փութացած ըլլալով մասնակցելու նոյն տօնին, չէր կրցած կատարել իր օրական սպասարկութիւնը: Կ'ըսուի թէ նոյն ինքն Լուսաւորիչ՝ սպասաւոր հրեշտակէն առած ըլլայ այս բացատրութիւնը և առանգած Հայոց ազգին ժԲ. դարու նշանաւոր Կաթողիկոսներէն Գրիգոր Պահլաւունի Մեծա-

հրաշ շարականին մէջ այս աւանդութիւնն է որ կը յիշատակէ: Այդ կիրակին կը կոչուի Երկրորդ Ծաղկազարդ: Առաջին Ծաղկազարդով Հայ Եկեղեցին կը տօնէ Յիսուսի մուտքն յերուսաղէմ. իսկ երկրորդ Ծաղկազարդով կը յիշատակուի անոր փառաւոր մուտքն ի վերին Երուսաղէմ: Այս պատճառով շարականք են. Գալստեան կ'երգուին ըստ մեծի մասին:

ՍՈՌՑՈՒԱԾ ԷԶԵՐ

Ողբացեալ Արփիար Արփիարեան, որ այնքան նշանակելի դիրք ունեցած է հայ կեանքին վերջին երկու երեք տասնեակ տարիներուն մէջ՝ իր գործունէութեամբ եւ զրական բարձր կարողութեամբ, գրեթէ անուճով միայն ծանօթ է մեր նորահաս սերունդին, որովհետեւ մեծ զրազէտն եւ յեղափոխական գործիչը տասնեւհինգ քսան տարիէ ի վեր հեռու ապրեցաւ Պոստէն, եւ արտասահմանի մէջ գրեց ու գործեց. իսկ անկէ առաջուան իր մտքի արտադրութիւնները թողուած կը մնան Պոստայ օրաթերթերու եւ պարբերականներու յարկին մասին մէջ: Փափաքելի է որ իրականութիւն գտնէր իր գործերը հատորներու մէջ ամփոփելու մտադրութիւնը: Սպասելով ատոր, մենք հաճոյքն ունինք այսօր իսկ հրատարակութեան տալու իր սրտայոյզ եւ կեանքի իրականութեամբը թրթռուն մէկ վիպակը, որ այժմէական է գերազանցօրէն աս ակնպոյիկ ժամանակին մէջ, երբ սովորութիւն է ի դէպս եւ յանդէպս դատափետել, վարկաբեկել կղերականութիւնը, մասնաւորապէս քաջանայական դասը, որուն խոնարհ մէկ անդամին յուզիչ մէկ անձնութիւնը կը պատմուի, երկու երիտասարդ հոգիներ ազատելու համար մահուան ճիրաններէն. անձնութիւնը մը որ սակայն դատափետուեանց առաքիպ կ'ըլլայ իրերը մակերեւութային տեսութեամբ մը դատող մահուլին կողմէ:

ՍԻՄՈՆԱԿԱՆ ՏԵՐՏԵՐԸ

Ս.

Երեք ամսէ ի վեր Ստեփանիկ եւ Երանիկ յաճախ կը տեսնեն զիրար. և սակայն ժամանակը, որու կը պարտինք—

գէթ այսպէս վճռած են իմաստունները—
յաղթանակն ամէն դժուարութիւններու,
տակաւին չէր չնարհած Ստեփանիկի պա-
տեհ առիթ մը իր խոստովանանքն Երանի-
կին ընելու:

Ժպտելով կրնաք գուշակել այդ խոս-
տովանանքի գաղանիքն երբ ըսենք թէ
Ստեփանիկ տաան եւ ինը տարեկան էր ու
Երանիկ տաան եւ վեց: Անուշ աչուի էր
պատանին, խարտեաչ մազերով, եւ մեղա-
մազձութեան նուրբ շղարչը կը շնորհա-
զարդէր անոր գունատ աչտերը: Եթէ կը
կարծէք, որ Երանիկն ալ պիտի ներկայա-
ցնենք սեւաթոյր, սրպէս զի հաւատա-
րիմ մնանք վէպի հակադրութեան օրէնք-
ներուն, կը սխալիք: Երանիկի դէմքը
պատկերացնելու համար հանդէպ ձեռ աչ-
քին, կը դիմենք բանաստեղծներու բա-
ռարանին, որմէ լաւագոյնը դեռ չէ հը-
նարուած նկարագրելու համար աղջիկ մը
զոր կ'ուզենք սիրելի ընծայել ընթերցո-
ղին, եւ կ'ըսենք թէ՝ Երանիկի գլուխը
զարդարուն էր ոսկեթել խոպոպիներով,
ինչ որ մեր հասարակ մտնկանցուններուն
լեզուով կը նշանակէ թէ այդ աղջիկը
խարտեաչ էր, ու քաղցրահայեաց ծաւի
աչքերը կը ցոլացնէին երկնքի կապոյտը.
եւ այս ալ նուիրագործեալ բացատրու-
թիւնն է նկարագրելու համար աղջիկ մը
որու կապոյտ աչքերն զմեզ կը դիւթեն:
Ո՛չ Երանիկ հարուստ էր ո՛չ Ստեփանիկ.
բայց ո՛չ ապաքէն ընտելիւնը սէրը պար-
գեւած է աշխարհի, որպէս զի սեւ տնակը
լուսաներկ երեւի աղքատին եւ ցնցոտիներն
ոսկեհոռ:

Լուսնիկին լուսովը յուլիսի տաք գիշեր
մը Հայերու եւ Յոյներու բազմութիւնը կը
զբօսուէր Պոյաճը-գիւղի բարձունքը, Ծրս-
տըխլըքի տափարակին վրայ. կրակի տօնն
էր Պօլիսի, կամ աւելի ճիշդը Պօլիսի
Յոյներուն: Բլուրին կատարն ու հովտին
խորը, ծովեզրն ու դաշտին մէջ ուր որ
Յոյն մը կայ, հոն այդ գիշերը խարոյկ մը
կը վառի, ցոլացում յունական սրտի:
Զբօսող բազմութիւնը կէս գիշերի մօտ
չըջապատեց հնկէկ նաւակ մը, ծեր եւ ան-
պէտ, որ մի քանի օրէ ի վեր պատկազարդ

կը մնար անդ, զո՛հ ըլլալու օրուսն դիւ-
ցազն Ս. Յովհաննէսին: Կիսով չափ ար-
դէն մարտիրոս եղած բաղմորախո փայտա-
կոյտին ճարճատիւնը, կուպրին հոտը, կը-
րակի բոցն ու մուխը կը պարարէին տօ-
թակէզ հանդիսատեսներու զգայարանը-
ները, երբ յանկարծ փչեց հիւսիսէն հովը
որու պարգեւած հեշտութիւնը մոռցնել
կուտայ Պօլսեցիին ամէն վիշտ, ամէն տա-
ռապանք: Բոց եւ մուխ, որք երկնապաշ-
էին մինչեւ այն ատեն, յանկարծ փոխեցին
իրենց ուղղութիւնը, կամ լաւ եւս է ըսել,
կորուսին ո՛ր եւ է ուղղութիւն. խաղալիկ
հովի քմահաճոյքներուն՝ կը սողոսկէին
մերթ ստորնաքարչ, եւ մերթ վերամբարձ
ի թեւս հողմին կը տարուբերէին արեւելքէն
յարեւմուտս, արեւմուտքէն յարեւելս,
սփռելով իրենց մոլորընթաց երթեւեկի մի-
ջոցին այրած փայտի կտորներ, վառ կու-
փուկներ, հրացայտ կայծեր: Հանդիսա-
տեսները բարձրաձայն ծիծաղներով ու ա-
ճապարանօք աստ անդ ցիր ու ցան սրփ-
ռեցան, իբր ահաբեկ յախուռն յարձա-
կումէ մը, վտանգէ դերծ մնալու եւ լիա-
թոք չնչելու համար հեշտապարգեւ հիւ-
սիսակը:

—Ա՛, մինա՛կ էք, ըսաւ Ստեփանիկ
մօտենալով Երանիկի:

—Չէ՛, ամէնքս մէկտեղ էինք, իրար
կորսնցուցինք. բայց հիմա կը գտնեմ մե-
րինները:

—Եթէ կ'ուզէք, կ'ընկերանամ ձեզ
մինչեւ տուն. թերեւս գացած ըլլան:

—Չեմ կարծեր, այս տեղուանքն ըլ-
լալու են, կը գտնենք. երթանք այս կողմէն
եթէ կ'ուզէք:

Եւ միասին գնացին, առաջնորդութեամբ
Երանիկի, այն կողմն ուր եթէ ոչ ապա-
հովաբար, գէթ հաւանօրէն ոչ ոք կար Ե-
րանիկի հետ եղողներէն:

Պարզասիրտ սիրահար պատանին ան-
շուշտ կը համարէր զուտ դիպուածի ար-
դիւնք Երանիկի անջատումն իր բարեկամ-
ներէն: Միթէ կը կասկածէ՞ր Ստեփանիկ
որ երեք ամսէ ի վեր Երանիկի սիրտն ալ
իր սիրովը կը բարախէր. ինչպէս պատ-
կառուկ ծաղիկը կ'զգայ անմիջապէս թէ

ձեռք մը իրեն հպած է, նոյն և աղջկան սիրտն անդէն և անդ կ'զգայ երբ սիրտ մը կը մերձենայ իրեն: Այդ գիշերն Ստեփանիկ կը դիտէր հեռուէն Երանիկը. աչքերն անբաժան էին անոր ամէն մէկ շարժումէն և սակայն հոգին համակեալ էր տխրութեամբ: Երանիկ կը խօսէր, Երանիկ կը խնդար, դիտելով անդադար իր շուրջը: Բայց եթէ Ստեփանիկի մօտը գտնուէր քարեկամ մը, փորձառու՝ աղջիկներու սիրահարական հնարամտութեան, պիտի ըսէր նմա.

—Մի' խռովիր, Ստեփանիկ. կիները կը հնարեն ծանրածանր զբաղումներ— և խօսիլն ու խնդալն անոնց համար շատ մեծ զբաղմունք է— ծածկելու համար ամէն աչքերէ իրենց սրտի տրոփումները: Ձեռքդ կար թէ Երանիկ կը խօսի, կը խնդայ, որպէսզի աներկիւղ, անկասկած դէպի քեզ դարձնէ աչքերը, վստահ գիտէ թէ զինքը տեսնելու համար միայն սպրդած ես այդ բաղմունքեան մէջ: Եւ միթէ կը կարծես որ ինքն ալ յանձնառու ըլլար գտնուիլ այդ այլալուկ խռմբերու հետ եթէ, ապահով չըլլար որ հոն զքեզ պիտի աեսնէր նոյն նպատակաւ հոն եկած: Ինքն ալ կը կարծէ այդ գիշերն առիթ մը գտնել, կամ թէ ստեղծել, քեզ հետ մի քիչ մինակ մնալու. նախազգացում ունի թէ իրեն բան մը պիտի ըսես:

Ինչպէս ամէն ատեն, նոյն և այդ գիշերուան համար հաստատ առաջադրած էր Ստեփանիկ վերջ տալ իր հոգեկան տառապանքներուն, իր սէրն յայտնելով Երանիկի: Ամէն օր սրտադողի մէջ էր. ո՛չ ապաքէն ամէն օր ամուսին մը կրնար ներկայանալ Երանիկի: Միթէ դեռաբուսիկ պատանիները չե՞ն հաւատար որ իրենց սիրած աղջիկը պճնազարդեալ է ամէն դիւթիչ շնորհներով, ու ամուսիններն անոնց համար շուայլաբար կը ներկայանան:

Քալեցին միասին մի քանի վայրկեան. վարանումի մէջ էր Ստեփանիկ, կը դողդղար. վերջապէս մեղմաձայն արտասանեց, հազիւ լսելի.

—Կը ներէ՞ք ինձ յանդգնութիւն մը, օրիորդ:

Եւ առանց սպասելու պատասխանի, նամակ մը սպրդեց Երանիկի ձեռքը: Զարմացում ձեւացնելով՝ աղջիկը հարցուց.

—Ի՞նչ է, որո՞ւ համար:

—Միտքեմ, կարդացէ՛ք:

Յառաջացան քանի մը քայլ ևս:

—Մեզմէ մէկը չեմ տեսներ այս կողմերն, ըսաւ Երանիկ:

—Ու դարձան ուրիշ կողմ, ուր ապահով էր Երանիկ թէ կը գտնուէին իրենները:

—Հո՛ս են, հո՛ս, շնորհակալ եմ ըսաւ.

Ու վազելով հեռացաւ:

Բ.

Նորին հեգնութեամբ, որ աւելի խանդաղատանքի արտայայտութիւն էր քան թէ արհամարհական ծաղրի, Ստեփանիկի վարժապետներն ու դասընկերները «մեղմադձիկ բանաստեղծը» մկրտած էին զնա, երբ դպրոցն էր: Թուրքանութեան միւսիւնն ու տաճկերէնի հօճաւ եփեմէն և եթ օտարոտի կը մնային այդ փաղաքական կատակներուն: Դրական կեանքի այդ պաշտօնական ներկայացուցիչներն իրենց արհամարհական դատակնիքն ընդդէմ Ստեփանիկի վաղուց արձակած էին, վճռելով իրենց խորին իմաստութեան մէջ թէ «անիկայ մարդ ըլլալիք չունի», և Ստեփանիկը սիրողներուն հեշտին չէր բեկանել այդ դատավճիռը: Միթէ հնա՞ր էր պաշտպանել պատանի մը որ արդէն տաան և հինգ տարեկան, ու տակաւին ոչ կարող էր չղթայի կանոնի համեմատ թուաբանական խնդիր մը լուծել, և ո՛չ ալ ընդունակ Ինշահը կարդալու:

Յետադէմ՝ դրական գիտութիւններու մէջ— և տաճկերէնն ալ մաս կը կազմէ դրական գիտութեանց, զի կը համարուի հացի գիտութիւնը— Ստեփանիկ պարծանք էր հայերէնի ու ֆրանսերէնի ուսուցիչներուն:

Տաան և եօթը տարեկան, Ստեփանիկ ելաւ դպրոցէն. մեծ եղբայրը՝ Պետրոս՝ ուղեց զնա մասնագէտ ընել, բայց այս մասին եղած ամէն առաջարկ Ստեփանիկ մերժեց, այն յամառութեամբ որ յատուկ է տկար արարածներու: Այլ պէտք էր ապ-

րիւ և Ստեփանիկ ընտրեց վարժապետութիւնն իբր միջոց ապրուստ ճարելու։ Ուրիշ ասպարէզներէ ո՛չ նուազ շահաբեր, ո՛չ նուազ ապահով կը համարէր վարժապետութիւնը, և մանաւանդ ամէնէն աւելի ազատը։ պէտքերուն համեմատ աշխատիլ, ըստ հաճոյս օրը մի քանի ժամ դասախօսել և փնայած ժամանակին տէրն ըլլալ, Ստեփանիկի երազն էր։ Այդ երազն իրականութիւն տեսնելու համար շատ դժուարութիւն չքաշեց։ շնորհիւ հայերէնի ու ֆրանսերէնի դասատուին որ հոյթայթեց նմա դասախօսութիւն երկու դպրոցի մէջ։ Միայն թէ տաճկերէնի ու թուրքանուսթիան վարժապետները բաւական հպարտացուն կատարուած տեսնելով իրենց նախադուշակութիւնները։ «Ստեփանիկ մարդ չէր եղած, վարժապետ եղած էր, իրենք արդէն զայս ըսած էին»։

—Ան ո՛ւր, մէկալ եղբայրը ո՛ւր, կ'ըսէին սրտայոյզ ներդաշնակութեամբ երկուքը միասին, և շիտակն ըսելով այս էր նաև «հասարակաց կարծիքը»։

Արդարեւ «մէկալ եղբայրը» Պետրոս «ուրիշ բան էր»։ Անոր վիճակը նախանձելի էր, և զիտենք թէ ի՞նչ տեսակ երեւոյթ է Պոլսի մէջ երիտասարդ մը որուն վիճակը նախանձելի է։ Այդ երեւոյթը միկնելու համար ստիպուած չինք երկար պարբերութիւններ շարադասել, զի պարզ է նա իր վստիւթեան մէջ, Երիտասարդն որ վաճառատուն մը կամ դրամատուն մը մէջ ամբողջ կ'ստանայ տամնէն տասն և հինգ ոսկի, կը համարուի նախանձելի վիճակ ունեցող երիտասարդ, որուն աղջիկ տալ կը բաղձան տմէն ծնողք—բնականաբար հարուստներէն զատ։ Պետրոս Մարանկոզեան այժմ այդ վիճակին տիրացած էր։

Սակայն որքա՞ն տառապանքներ՝ մինչեւ այդ բարձրութեան հասնիլն։ Ինք տասն և հինգ տարեկան էր ու կրասեր հզրային ութ, երբ մեռաւ հայրերնին, ատաղձագործ Գէորգը։ Մինչ խեղճ արուեստաւորին դադարը դռնէն դուրս կը հանէին, թշուառութիւնն ալ ներս կը սպրդէր։ Ատաղձագործը թէպէտ քիչ կը շահէր, բայց «վարդի պէս տուն կը պահէր»։

—Ի՞նչ պիտի ընեմ, տա ի՞նչ ծուն էր կուլիսու էկաւ, կ'ըսէր լալով Շաղիկ տունտու, ատաղձագործին այրին։

—Աստուած ողորմած է, Շաղիկ տունտու, Աստուած ողորմած է, կ'ըսէին բարեկամ ու դրացի կիները։

«Աստուած ողորմած է»։ ով որ առաջին անգամ այս երեք բառերը միացնելով արտասանած է, իրաւունք ունի համարուիլ մին մարդկութեան բարերարներէն։ Հազարաւոր տարիներէ հետէ «Աստուած ողորմած է» ըսեր է աղքատն ու հացը գրտեր։ Աստուած ողորմած է ըսեր են այրին ու որբը եւ իրենց արցունքները սրբած։ Եւ Աստուած ողորմեցաւ Շաղիկ տուտուին ալ, վասն զի անոք անօգնական կիներ համբերեց ու աշխատեցաւ։

Մէկ տարիէն աւելի Պետրոս տակաւին դպրոց մնալու էր չըջանաւարտ ըլլալու համար։ շատ կիներ խրատեցին Շաղիկ տուտուն տղան դպրոցէն հանել և գործի մը դնել։

—Քեզի ալ մեռաւ մը կ'ըլլայ, մեղք ես, կ'ըսէին։

Բայց ժրագլուխ կիներ մտիկ չըրաւ։ ամէն նեղութիւն յանձն առաւ որպէսզի Պետրոս կիսկատար չթողու իր «կարդալը», և «չէնքովն ու շնորհքովը» դպրոցէն ելնէ ու մարդ ըլլայ։

Մա՛րդ ըլլան զաւկները, այս եղած էր նաեւ ատաղձագործին երազը, և կիներ այժմ մեղք կը սեպեր չգործադրել իր էրկանը փափաղները։ Ամէն ատեն գործաւորը կ'ըսէր։

—Տղաքս թող ուսմունք սորվին, մարդ ըլլան, մեզի պէս չըլլան։

Անտարակոյս խեղճ գործաւորը շատ պիտի ապշէր, եթէ ապրելով մի քանի տարի եւս, օր մը լրագիրներու մէջ յանկարծ կարդար—զի պարզ կարգալ դրել գիտէր— «Պէտք է որ մեր տղաքներն ատաղձագործ ըլլան, երկաթագործ ըլլան, ոսկերիչ ըլլան, վերջապէս պէտք է որ ձեռքի արուեստ մը սորվին, որպէսզի մարդ ըլլան, մեզի պէս չըլլան»։ Այլ այս ապշութեանը ժամանակ չմնաց, վասնզի 1881 թուական

նին էր որ Կովկասցի սպայն (*) ի Պոլիս մու-
լեռանդ քարոզիչ հանդիսացաւ դպրոցը
գործարանի վերածելու գաղափարին, և
այդ միջոցին ատաղձագործը գերեզմանն
էր և զաւկներն ալ արդէն եղածը եղած
էին, ետ դառնալու հետք չկար—և ոչ ալ
հարկ:

Ատաղձագործին անդրանիկ Վաւակն
ինքն ալ արուեստ մը գիտէր, արուեստ
մը որ արհամարհելի չէր, թէպէտ չըլլար
ձեռարուեստ.—թուարանութիւն և հաշ-
ուակալութիւն. ասոնց վրայ աւելցնելով
հայերէն, ֆրանսերէն ու տաճկերէն լի-
զուներու հմտութիւնը, ու իր պարկեշ-
տութիւնն ու աշխատասիրութիւնը, Պետ-
րոսի դրամագլուխը կարելի էր պատկա-
ռելի համարել: Երբ Պետրոս դպրոցն էր,
հոգաբարձուներէն մին, առաջնակարգ
վաճառական, միտքը դրած էր զնա իր
վաճառատունն առնել, վասն զի կը տեսնէր
թէ նա պիտի կարենար պատուական գրա-
գիր ըլլալ. հոգաբարձու վաճառականը ե-
րիտասարդ էր, ազնիւ անձ և բաւական
ուսեալ, հետեւաբար պէտք չէ անբնա-
կան երեւոյթ համարել եթէ ըսենք որ
Պետրոսը քովն առած օրն անոր ամսական
երեք ոսկի յատկացուց, գումար մը որ
Պոլսի մէջ «կարեւոր» կը համարուի, սկըս-
նակ գրագրի մը համար:

Երբ Պետրոս առաջին ամսականը առ-
նելով բերաւ երկու ոսկին մօրն յանձնեց,
այդ օրն Աստուծոյ ողորմութիւնը ակնե-
րեւ էր Շաղիկ տուտունին, որ արցունքնե-
րով եկեղեցի վազեց և ուխտեց քառա-
սուն իրիկուն եկեղեցի երթալ ու մէյ-
մէկ մօմ վառել: Մի քանի տարի վերջ
Շաղիկ տուտու ալլեւ դրսի կար կարելու
պէտք չունէր. երբ տղան սկսաւ ութ ոսկի
ամսական առնել, միայն տան գործերով
կ'զբաղէր: Իսկ այժմ այդ տան գործերն
ալ թեթեւցած էին. մանչ մը կը պահէին.
Պետրոսի ամսականը տանն եւ հինգ ոսկի
էր. ու Շաղիկ տուտուն ալ որ երջանիկ
կին մը կը համարուէր, սկսած էր հանըմ

յորջորջուելու յաւակնութիւնն ունենալ:

Եւ այդ յորջորջումը Շաղիկ տուտու
ոչ միայն նուիրագործում կը համարէր իր
ընկերական դիրքին, այլ նաեւ քաղաքա-
գիտական հաշիւ մը: Պետրոսի հոշակը
տարածուած էր Պոլսի ամէն թաղերը և
խալիւղ կիներն անդադար աղջկան խա-
պար կը բերէին մինչեւ 500 ոսկի դրամա-
նայով, բայց Շաղիկ տուտու կը մերժէր
այդ առաջարկները, արտասանելով լակոնա-
կան բանաձեւ մը.


—Տանա անոր կարգուելուն վախճը չէ:
(Շարունակելի) ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

Հ Ա Ն Գ Ի Ս Տ

Տ. ՍԿՐՏԻՉ ԵՊԻՍԿ. ՎԵՀԱՊԵՏԵԱՆԻ

Մարաշէն Պատրիարքարան հասած հե-
ռագիր մը անցեալ շաբաթ օր կը գուժէր
Տ. Մկրտիչ Եպիսկ. Վեհապետեանի մահը.
իր յառաջացեալ տարիքին մէջ չկարենա-
լով հանդուրժել աղիքներու սուր հիւան-
դութեան մը որուն ենթարկուած էր վեր-
ջերս: Իրմով կ'անհետանայ Հայ եկեղե-
ցականութեան ժողովրդական ուշագրաւ
դէմքերէն մէկը: Էնկիւրիի մէջ ծնած 1842ին,
պզտիկ հասակէն զգաց կոչումը եկեղեցա-
կանութեան, և երիտասարդ տարիքին մէջ
վարդապետ ձեռնադրուեցաւ՝ Տ. Ներսէս
վրդ. անունով Կիլիկիոյ հանգուցեալ Քէյֆ-
սիպեան Տ. Մկրտիչ Կաթողիկոսէն, որուն
քարտուղարը, խորհրդականը, և փոխա-
նորդն եղաւ երիտասարդութեան եռանդուն
տարիներուն: Երեսուն տարիի չափ առաջ
նոյն կաթողիկոսին հետ Պոլիս եկաւ. իրրեւ
աջ բազուկը Քէյֆսիպեանի պալքարին՝
ընդդէմ Աղգ. Պատրիարքարանի, որուն
աթոռը կը բազմէր այն ժամանակ մեծ և
ազգասէր Պատրիարք մը՝ Տ. Ներսէս Վար-
ժապետեան: Ի վերջոյ համամիտ չգտնուեցաւ
սակայն հոգեւոր հօրը գործելակերպին:
1883ին եպիսկոպոսացած և Մկրտիչ կոչուած՝
ղինք ձեռնադրողին անունով, շատ չանցած
հեռացաւ անոր քովէն, և եղաւ առաջնորդ

(*) Դրիգոր Նիկողոսեան, որ այդ Թուականին
Պոլիս եկած՝ բուն թանաքագործու առիթ տուած
էր իր նորօրինակ գաղափարներով: Ծ. ԽՄԲ.



† Տ. ՄԱՐՏԻՉ ԵՊԻՍԿ. ՎԵՀԱՊԵՏԵԱՆ

Ատանայի, ուր ժողովրդապետ հօր մը յիշատակը ձգած է: Բայց հանգիստ չթողուեցաւ այնտեղ: Ազգային բարեգործական մարմնոյ մը իր նախագահութիւնը տեղեկագրուեցաւ կառավարութեան իբրեւ խռովարարական քօմիդէի մը պարագլուխ: Պոլիս կանչուեցաւ իբր աքսորական, ուրիշ ալ Տ. Եզնիկ եպիսկոպոսի հետ աքսորուեցաւ Երուսաղէմ: Ժամանակ մը այնտեղ մնալէ ետքը, 1895ին վերադարձաւ Կ. Պոլիս, ուր քիչ մը ասին Պէօյլեքտէրէի քարոզչութիւնը վարելէ ետքը, երկար տարիներ նոյն պաշտօնով մնաց Սկիւտար Ս. Խաչ եկեղեցին, միշտ ոստիկանական առաւել կամ նուազ խիստ հսկողութեան տակ մնալով Համիտեան բռնակալ օրերուն, տարագրեալ մը, աքսորական մը, ուրիշ Կիլիկիցի եկեղեցականի մը՝ Դանիէլեան Տ. Ներսէս Վ. ի հետ, և անոր նման յաճախ ոստիկանական հարցաքննութեան և արգելափակման ենթարկուելով, ամէն անգամ

որ Երլտըզեան կամաւոր բանտարկեալը սարսափեցնող ձեռնարկներ կը սարքուէին: Ինք ալ, Տ. Ներսէս Վ. ին հետ, պատիւը ունեցաւ «Նիւրաթիրուելու» տիրահաշակ Նէճիպ Մէլհամէի քննութեան յանձնուած դժբախտներու կարգին:

Ազատութեան հռչակումէն ետքը միայն կրցաւ շունչ առնել. բայց միշտ կարօտը կը քաշէր Կիլիկիային, ուր ծառայած էր երկար ժամանակ: Հուսկ ուրեմն առաջնորդ ընտրուեցաւ Մարաշի, ուր գնաց Կիլիկեան ահաւոր աղէտէն վերջը, և աչքովը չափեց անհունութիւնն այն ցաւին ու տառապանքին որուն ենթարկուած էին Ատանան և իր շրջակայ գիւղերն ու քաղաքները, չէն ուրազամարդ կեդրոնները, զորս աւերակներու կոյտ մը միայն գտաւ: Ասիկա խորապէս աղքեց իր արդէն քայքայեալ կազմուածքին վրայ, և վերջին ժամանակներ հասած տեղեկութիւններ աննպաստ էին իր առողջական վիճակին մասին: Այդ տագնապալի կացութեան մէջ իսկ կարելին ի գործ դրաւ Մարաշի ժողովրդեան վիճակը յարեւելու, և անոր տնտեսական թէ հոգեկան քայքայուած դիրքը բարելաւելու համար:

26 տարի առաջ իբրեւ նուիրակ գացած է Հնդկաստան և այնտեղ գնահատուած է իր ժողովրդական քարոզներով և եռանդուն աշխատութեամբ՝ հնդկահայ ժողովրդեան կողմէ, որոնցմէ ի նշան համակրութեան ստացած է շատ թանկարժէք գաւազան մը, զոր մինչեւ վերջին օրերս իր քով կը պահէր:

Վերջին անգամ Մարաշէն՝ իբրեւ քըննիչ՝ կաթողիկոսական հրամանով զրկուեցաւ Այնթապ, ուր կուսակցականներու անհաճոյ եղաւ իր ուղիղ, անկաշկանդ և օրինապահ ընթացքով, և այս պատճառով իսկ անհարկի դատաւիտումներու ենթարկուեցաւ Պոլսոյ Դաշնակցական օտկանին կողմէ:

Հանգուցեալ Սրբազանին մահը խորունկ վիշտ պատճառեց ի Պոլիս, մանաւանդ զինքը մօտէն ճանչցողներու շրջանակին, նաեւ ազգային շրջանակներու մէջ, ուր ազատութենէն վերջը երեսփոխանութեան և

Կրօն. ժողովոյ անդամակցութեան ալ կոչուեցաւ, սակայն ժամանակ չունեցաւ արդիւնաւոր գործունէութեան ցոյց տալու, չուտով կանչուելով Մարաշ ուր ահա կը փակէ իր կեանքի հաշիւը:

Իր քարոզները՝ որոնք հեռու էին իմաստասիրական վերին ոլորտներու մէջ սաւառներէ և գրական բարձր ոճէ — ընդհանրապէս անհասկնալի ժողովրդեան ըստեալ մեծամասնութեան — ունէին սակայն համոզիչ չեղտ մը: Բնականէն օժտուած լաւ խօսելու ձիրքով, սահուն կերպով կը քարոզէր թուրքերէն թէ հայերէն լեզուով: Ժողովուրդին հետ ապրած էր, անոր վիշտերն ու տխրութիւնները ճանչցած, անոր պէտքերն ուսումնասիրած և կրնանք ըսել անոր հոգիին ծալքերը վերլուծած: Եւ այս պատճառով իսկ կ'ազդէին իր խօսքերը, — կեանքի դառնութիւնը ճանչցած հոգեւոր հօր մը փորձառու խրատներ — ժողովրդային որոշ դասակարգի մը վրայ, մանաւանդ անոր համար որ հաւատքով կը խօսէր, հաւատքով ու խորունկ ջերմութեամբ կը կատարէր եկեղեցական պաշտամունքները, իր երկիւղած ընթացքովը բարի օրինակ ըլլալով ժողովուրդին ալ նոյն երկիւղածութեամբ վերաբերուելու զէպի Եկեղեցին, անոր պաշտամունքները, անոր հաւատալիքներն ու վարդապետութիւնները:

Հանգիստ իր հոգեւոյն:

Ամեն. Ս. Պատրիարք հայրը, ցաւակցական հեռալիք ուղղեց Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսին, իր միաբանութեան կարեւորագոյն մէկ անդամին կորստեան համար: Հեռագրեց նաեւ Մարաշ, որպէս զի հանգուցեալին զիրքին արժանաւոր յուղարկաւորութիւն մը կատարեն:

* Սկիւտարի ժողովուրդը, որ երկարատեւ իրեն քարոզիչ ունեցած էր հանգուցեալ Սրբազանը, ցաւակցական հեռագիր ուղղեց անոր ընտանեկան պարագաներուն: Ս. Խաչ Եկեղեցւոյն մէջ ալ հանգիստաւոր հոգեհանգիստի պաշտօն պիտի կատարուի:

ԿՐՕՆԱԿԱՆ ԶԳԱՑՈՒՄԸ

ԿԻՇՆԸ ԱԻԵԼԻ ԿՐՕՆԱՍԵՐ Է
ԹԷ ԱՅՐ ՄԱՐԴԸ

(ՇՈԳԵՐԱՆԱԿԱՆ)

Կիւնը աւելի կրօնասէր է քան այր մարդը, անվիճելի է այս:

Դացէք եկեղեցի մը՝ երբ կրօնական արարողութիւն կը կատարուի. պիտի տեսնէք թէ ի՞նչ համեմատութիւն կայ երկու սեռերու թիւին մէջ. տարբերութիւնը միշտ ինչպատ կանանց է:

Կնոջ մէջ ամենեւնի զօրաւոր ոգին միշտ աստուածաբնութիւնն է դրեթէ. կրօնը թերեւս այնքան երկար տեւականութիւն չունենար և այնքան խորունկ արմատ չձգէր, եթէ կիւնը այնքան կրօնասէր չըլլար, եթէ ան մեր վրայ այն արդարեւ հզօր ազդեցութիւնը չգործէր, և եթէ չյաջողէր իր ազօթելու հրապոյրին միջոցաւ՝ մեզ ընել, գէթ առերեւոյթս, ջերմութեանդ ներքին այն խորանին ուր ան կ'ազօթէ և կը յուսայ, ուր կը հայցէ կենաց պայքարներուն դէմ քաջասրտութիւն և զթուլթիւն բոլոր անոնց համար զորս կը սիրէ:

Կիւնը մեզմէ աւելի կը հաւատայ, որովհետեւ կը սիրէ. կը հաւատայ Աստուծոյ, որովհետեւ սիրոյ սկզբնական աղբիւրն է Ան, որովհետեւ այս աշխարհի վիշտերուն և անարդարութիւններուն գերագոյն վրէժ-խնդիրն է Ան, որովհետեւ ամէն բարիք-ներու բաշխողն է Ան, որովհետեւ տիեզերական Նախաիննութեան ներկայացուցիչն է Ան:

Հոգիի անմահութեան հաւատալը կնոջ սրտին համար պէտք մը, անվիճելի սկզբունք մըն է, և մեծ անգթութիւն մը պիտի ըլլար իրեն համար մտածել թէ գերեզմանէն անդին այլեւս չպիտի կրնայ տեսնել իր սիրելիները, հայր, մայր, ամուսին, զաւակ, որոնց համար և որոնց

հետ ապրեցաւ ան: Այս հաւատքին մէջ է որ կրնա կը գտնէ երաշխիքը յաւիտենականութեան մէջ վերստին տեսնելու իրեն սիրելի էակները: Եւ ահա ճիշտ այս պատճառով է որ մեզմէ աւելի կը հաւատայ Աստուծոյ և հոգիի անմահութեան, նոյն իսկ եթէ իր եկեղեցական պարտականութիւնները չկատարէ և անոր ծէսերուն չհետեւի անընդհատ:

Կնոջ կրօնասիրութեան գլխաւոր տարրերն են պատկառանքի զգացումը, մահէ վախը և երեւակայականին (fantastique) սէրը: Հոգեկան այս տարրերը, ամէնքն ալ, աւելի հզօր են կնոջ քով քան այր մարդուն. ասկից է ահա կնոջ կրօնասիրութեան առաւելութիւնը:

Կրնա չուզեր վերջապէս հաւատալ թէ մահով ամէն բան կը վերջանայ: Եթէ ճշմարիտ է թէ կրօնքը աստուածաբանական երեք առաքինութիւններու եռոտանիին վրայ հիմնուած է, կրնա ապահովաբար աւելի կրօնասէր է, ան որ մեզմէ աւելի՛ կը հաւատայ, աւելի՛ կը յուսայ և աւելի՛ կը սիրէ:

Կնոջ սիրտն ու հոգին թրթռացնող և գերազոյն բերկրութիւններու մէջ զգլխող ուրիշ քաղցր ներդաշնակութիւն մըն ալ, մայրական սիրոյ զգացումն է, կրօնքով միացած:

Ոչ մէկ բան այնքան յուզիչ է, քան տեսարանը մօր մը որ առաջին անգամ իր զաւակը ի ծունր կ'իջեցնէ խորանին առջև, անոր թոթովել տալու Հայր մերը, ուրկէ դու ան բան մը չի հասկնար:

Միացնել այս երկու փոքրիկ ձեռքերն որոնք մինչեւ այն ատեն միայն մայրական անուշ դէմքը գգուած են, որոնք միայն մանկական խաղալիքներու համար շարժած են, միացնել այս երկու սիրուն թաթիկները՝ աղօթելու համար Աստուծոյ, վեր վերցնել երկուստ ու զարմացկոտ անմիջ աչքերը այս անգիտակից սիրասուն արարածին եկեղեցւոյ միաթիւք լուծեան մէջ, միմիկ պահարանի մը կամարէն կախուած կանթիւղին աղէտ լոյսին առջև, վերցնել այս փոքրիկ գլխուն համար դու ա՛յնքան խորհրդաւոր քօղը որ կը բաժնէ տեսանելի

աշխարհը անտեսանելիէն, ծանօթը, անծանօթէն, լոյսը աղջամուղջէն և ըսել իրեն յուզիչ փափկութեամբ մը. «Տե՛ս, զաւակս, բարին Աստուած հոն վերն է. եթէ բարի ըլլաս, պիտի վարձատրէ քեզ և եթէ չար ըլլաս պիտի պատժէ քեզ...»

Որքան խօսք այնքան խորհրդաւոր գաղտնիք, որոնցմէ տղան բան մը չի հասկընար, բայց որոնք զինքը կ'ահաբեկեն և կը զիւթեն միանգամայն:

Այդ օրէն, մայրը կ'ընկերանայ տղուն, կրօնական մտածմանց բաւիղին մէջ. անոր կը սորվեցնէ հաւատքը, իր իսկ հաւատքը, իր հայրերուն հաւատքը. նոր մկրտութիւն մը գերբնական աշխարհին մէջ, նոր ծննդաբերութիւն մը իմացական, որու միջոցաւ ան կ'ուզէ իր սրտին սիրոյն ամբողջ թափովը մուծցած զաւկին երկրորդ կեանք մը պատուաստել:

Որքան ատեն որ կրօնքը միաթիւրութիւն մը և յոյս մը ըլլայ կեանքի փորձութեանց, աշխարհային ցաւերու և վիշտերու, արքան ատեն որ կրօնքը քաղաքակրթութեան և բարոյականութեան ազդակ մ'ըլլայ, պէտք է նախ մօրմէն ուսուցուի ան. եւ ես, իմ մասին, բնաւ չպիտի փափաքէի որ վարժարաններուն մէջ կրօնքի դասին համար ջերմեանդ ուսուցչուհիէ ուրիշ ուսուցիչ մը յատկացուի:

Օժտեցէք կրնա ու է հաւատքով, ըլլայ քրիստոնէական, ըլլայ իսլամական, կամ եբրայական թէ պուտտայական, պիտի տեսնենք թէ բարոյականութեան զըպրոց մը, բարեպաշտ ու փափուկ զգացմանց դասակարգ մը պիտի ընէ զայն, կ'ըսէ Մոնթէկայցա, դարուս մեծագոյն հոգեբանը և անժխտելի հեղինակութիւնը մարդկային սրտին բանախօսութեան:

Եւ Բրիտտոնէութիւնը, ուրիշ ամէն կրօնքներէ աւելի, կարծես, կնոջ համար ստեղծուած է: Կը սորվեցնէ ան սէրը, գթութիւնը և զոհողութիւնը. կը պաշտպանէ և կը միաթիւրէ տանջուածները և զրկեալները այս աշխարհին. միւս ամէն կրօնքներէն աւելի կրնայ պատասխանել անձնուրացութեան պահանջումներուն, գթալու և կարեկցելու ամէնէն խանդավաճ գորովներուն:

Այսօր կինը մը որ աշխարհային ձախորդութեանց, կեանքի փոթորիկներուն և դիմադրողութեաններուն յաջորդականութիւններէն ընկճուած, դառն վիշտերու մատնուած է, ճշմարիտ պէտք մը կը զգայ դիմելու Եկեղեցի, և հոն՝ մոմերու կամ կանթեղներու տարտամ լոյսին առջեւ ծնրադիր, քանի մը հաւատացեալներու շփոթ միմունջին մէջտեղ, աղօթելու ինքնամփոփ: Խեղճ կինը դուրս կ'ելլէ յուզեալ, դողդոջուն, բայց առցեալ այն տեսակ անճառելի միտքարութեամբ մը, որ կը համակէ իր սիրտն ու հոգին ամբողջ: Ան կը զգայ այն բաղմամբի հաճոյքներէն մին որուն կ'օժանդակէ իմացական ու բարոյական տարբերութեան հոգեւորութիւն մը:

Ազգային և Հին Ազգայ պատմութիւնէն գիտենք թէ կրօնական պատերազմներու մէջ, կամ կրօնքին դէմ եղած վտանգի մը միջոցին, կրնան ինչ մեծ դեր ունեցաւ: Լօմպրօզօ, մեծ բնութարար, կ'ըսէ թէ քրիստոնէութեան մեծ յեղափոխութեան միջոցին կնոջ մասնակցութիւնը 40 առ 100 եղած է, որ պատկառելի հումանտարութիւն մըն է արդարեւ, երբ բաղդատենք քաղաքական յեղափոխութիւններու մասնակցող կիներու թիւին հետ:

Բնախօսական այս բոլոր յատկութիւններուն հետ, սակայն, կինը միշտ աւելի նախապաշարեալ, աւելի աւելորդապաշտ եղած է և է քան այր մարդը, նոյն իսկ երբ մտաւորական հաւասար մակարդակի վրայ գտնուի: Անյիշատակ ստեղծներէ մինչեւ այսօր, երազահաններուն, բարտազուկներուն, ձեռնահամայններուն կտմ թղթահմայներուն ամենէն հաւատարիմ յաճախորդները կրնան եղած են: Ասոնք ապացուցանել և թուել նիւթէս չեղիլ պիտի ըլլար և Տանայի բաղմամբիւ էջերը չպիտի բաւէին:

ԼԵՒՈՆ Յ. ԳԱՐԱԿԵՕՋԵԱՆ(*)

(*) Յօդուածագիր Տիար Լ. Գարակէօգիան, առեւտրական մարդ, միեւնոյն տառն ուսումնասիրող մը եղած է մանկավարժական եւ հոգեբանական գիտութեանց, որու կ'օժանդակէ մասնաւորապէս իր լեզուագիտական հիմունքները: «Տաճար»ի ընթերցողները մասնաւոր հաճոյքով պիտի կարդան իրենց առաւելութեանց եւ թերութեանց ուսումնասիրութեան նուիրուած այս կարգի լուրջ գրութիւնները:

ԻՄՐ. «ՏԱՃԱՐ»

ԲԱՌԱՐԱՆ

Ս. ԳՐՈՅ ԲՆԱՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

ՇՈՒՆ.—(Ա. Թագ. Ժէ. 43. Յոր. Լ. 1). Երբ. Քեղեպ, Յուն. Քիոն. Կ. Բ. Canis.

Շունը Ս. Գրքի մէջ յաճախ յիշատակուած է իբր նշանակ անարգանաց և արհամարհանաց: Պաղեստինի և Սուրիոյ փողոցներուն մէջ—թէ քաղաքաց և թէ գիւղօրէից մէջ—առ հասարակ ամէն տեղ կ'երևի այս կենդանիին ստորին տեսակը. ասոր ծագումը հաւանականաբար հօտերու շունէն կուգայ (Յոր. Լ. 1). հօտերու շունը քաղաքի շունէն կը տարբերի գլխաւորաբար իր երկար մազերով և փողածե պոչով, ինչպէս և իր յոյժ մեծ արիւթեամբ ու վայրագ քաջութեամբը. այս արտակարգ արիւթիւնը դժուար ու անտանելի կեանքին բնական արդիւնքն է:

Փողոցի շունը.— Պաղեստինի փողոցի շունին մարմինը՝ իր պոչը միտին չհաշուելով՝ 2—3 ոտք երկայնութիւն և 2 ոտք բարձրութիւն ունի. մարմինը, ընդհանրապէս խորտեալ թուի բայց յաճախ մոխրագոյն կամ սեւ, կարճ ու կարծր մազերով ծածկուած է. աչքերը փոքր են: Պաղեստինի շունները քաղաքներու և գիւղերու փողոցները գրաւած են միշտ. որ փողոցէն որ անցնիս, կը տեսնես աստ անդ աղտոտ շուներ. ու է շուն իր չըջանակի թաղէն դուրս չի կրնար ելնել ու անցնիլ միւս չըջանակի թաղին շուններուն խառնուիլ. եթէ պատահամբ շուն մը անցնի իր չպատկանած չըջանակէն, բոլորը մէկանց կը յարձակին, կը խաժատն ու կը հեռացնեն օտար շունը. նմանապէս երբ օտարական մարդու մը հանդպին, կը յարձակին ու շարունակ կը հաջնեն. այս շունները տուններէն նետուած ոսկորի, հացի կամ ունէ կերակուրի աւելորդներու մէջ կը փնտռեն:

իրենց կերակուրը և ասոր համար շատ անգամ անօթի կը մնան: Կ'ուտին նաև դիակներ (Գ. Թագ. Ժ. 11, Ժ. 2. 4, ԻԱ. 19). կը թափսուին աստ անդ, քաղաքին շուրջը ու մէջը, պատերուն տակ և գիշերները անհանգիստ բնելու աստիճան յաճախ կ'ոռնան (Սաղմ. ԾԹ. 7. 15):

Պաղեստինի առանձին ու ամալի տեղ-ուանքներու մէջ շուներ շատ անգամ կը յարձակին անցորդներու վրայ, մանաւանդ օտարականներու և մանաւորապէս շրջակայ Արար բնիկներու վրայ. ասոր համար է որ ցասկոտ մարդիկ նմանցուած են շուներու (Սաղմ. ԻԲ. 16, 20): կը գործածուէին իբր պահապան տուններու և վրաններու մէջ (Ես. ԾԶ. 10). Հրէից մէջ մարդ մը շան նմանցնել մեծ թշնամանք էր (Ա. Թագ. ԻԴ. 14, Բ. Թագ. Գ. 8, Թ. 8, Ժ. 2. 9, Դ. Թագ. Ը. 13, Ես. ԿԶ. 3, Փիլ. Գ. 2, Յայտ. ԻԲ. 15): Մէկ խօսքով Արեւելքի մէջ շունը վատասոր-տութեան, ծուլութեան, աղտոտութեան, անհաւատարմութեան և անարգութեան նշանակ կը համարուի: Գրիստոսի ժամանակ ալ ամէնուրեք կ'երեւին եղած ըլլալ, ճիշտ այնպէս ինչպէս Արեւելքի մէջ ցարդ շունենալով մանաւոր աէր, կը թափառին խումբ խումբ փողոցները առներու առջև և կ'ուտին ինչ որ մարդիկ հացի կտոր մը ի գիծոյ շարժեալ կամ ըստ հաճոյից կուտան (Մատթ. ԺԵ. 26. Մարկ. Է. 27. Դուկ. ԺԶ. 21):

Ռուսական շունը.—Ռուսական շունը փանօթ չէր Հրէից. Ս. Գրոց մէջ ալ որոշ ակնարկութիւն մը չկայ: Առական Լ. 31 համարի մէջ կը յիշատակուի «որսական շուն»ը, բայց այլք կը թարգմանեն «ձի»: Ամէն պարագայի մէջ շունը երբայական կեանքի մէջ իբր հաւատարիմ բարեկամ մարդուն չէ ճանչցուած:

Հովիտի շունը.—Հօտերու մօտ միշտ կը գտնուի շունը իբր պահապան. ամէնէն հաւատարիմ հսկողն է հօտին. գայլերու ու գաղաններու յարձակումներուն դէմ միակ յարմար նկատուած կենդանին է. այս պատճառաւ ստիպուած է ամառ ձմեռ, ցուրտին ու փութին միշտ հօտին հետ

միասին ըլլալ. այնպէս որ երկար և խիտ մազեզէն մորթը կը տոկայ անձրեւի, կարկուտի կամ ձիւնի, իր հանգիստը կ'առնէ պատերու տակ իր ոտքերով բացած խոռոչներու մէջ, կամ կամարակապ ճամբաներու անկիւնը և կամ բացօթեայ կակուղ տիղմերու կամ աւազներու վրայ:

«Շանխուր».—Բ. Օր. ԻԳ. 18 համարին մէջ յիշատակուած այս բառը կը նշանակէ «Շան գին», «շուութեան վարձք». այս վարձքը Տաճարին նուիրելը ընդունելի չէր և առաջի Աստուծոյ պիղծ կը համարուէր: «Որ և իցէ ուխտի համար բողի վարձքը կամ շունի գինը քու Տէր Աստուծոյդ տունը չտանիս, քանզի քու Տէր Աստուծոյդ առջեւ երկուքն ալ պիղծ են»: մինչդեռ Փրոնիկեցոց մէջ ասոր հակառակ էր. տաճարներու մէջ պաշտօնական բողութեան ու շուութեան վարձքը Աստուծոյ նուիրելը ընդունելի և հաճելի էր:

ՂԵՒՈՆԴ Ծ. Վ. ԴՈՒՐԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԱՆՀԱՍԿՈՂՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Ազգային կեանքի ամէնէն տխուր երեւոյթը, ցաւալի անհասկցողութիւնը կը շարունակուի կուսակցական և ոչ-կուսակցական հատուածներուն միջեւ: Պոլիսէն ետքը—կամ անոր հետ մէկտեղ—Իզմիր ևս թատր կը դառնայ տխուր պայքարներու եկեղեցիի շրջափակին մէջ և շուրջը: Օրաթերթերը պատմեցին ինչ որ պատահեց է նախորդ կիրակին քաղաքին Ս. Ստեփաննոս եկեղեցիին մէջ, ուր կատարուած բռնի միթինկի մը մէջ մէկուկէս ժամ խօսուեց է «հրահանգիչ դասախօսութիւն» մը, որ ուրիշ բան չէ եղած, եթէ ոչ թշնամանք Ազգ. Ժողովին դէմ, որ ողջմտութիւնն ունեցած էր իր վերջին նիստին մէջ ետ առնելու ճշունտի և ստիպման տակ տուած մէկ որոշումը: Խնդիրը լուրջ հանգամանք մ'առեր է՝ յանգելով ծեծի և կոխի, դրսմիջոցին ծանրապէս վիրաւորուող ալ եղած

է, և ոստիկանի ու ոստիկան-զինուորի օգնութեան պէտք տեսնուած՝ խաղաղութիւնը վերահաստատելու համար^(*)։ Եւ ասոր հետեւանքն եղած է հրաժարումը գաւառային վարչութեան անդամներուն, և անկերպարանութիւնը տեղային գործերուն։ Ասիկա ցաւալի է, յուսահատական նոյն իսկ։ Կը հասկնանք գաղափարի մը վրայ հաստատ մնալ, յամառիլ, ոչ միայն կուսակցական մարմնոյ մը, այլ նոյնիսկ ու է անհատի կողմէ։ Բայց գաղափարը, որուն համար կը կռուինք, պէտք է արժէ այն պայքարը զոր կը մղենք։ Ինչ որ ալ ըսուի, ներկայ պայքարը փոթորիկ մ'է գաւաթ մը ջուրի մէջ։ Հարժեր այն յուզումը որուն կ'ենթարկուի ժողովուրդը, այն տազնապալի անկերպարանութիւնը որուն կը մատնուին ազգին եկեղեցական, վարչական ու կրթական գործերն հաւասարապէս։

Մեր Դաշնակցական եղբայրները, կը կրկնենք, իբեկնց կազմակերպական ուժը պէտք է ծառայեցնեն լաւագոյն դատի մը ի նպաստ^(**)։ Խնդիրը, հիմնապէս, իրենց բանախօսելու ազատութեան վրայ է, զոր ոչ ոք կը զլանայ անոնց։ Ինչո՞ւ պընդել անպատճառ եկեղեցւոյ մէջ խօսելու վրայ, երբ ժողովուրդը այնտեղ ազօրեւ և Առաւելոյ խօսքը միայն լսել կ'ուզէ։ Եթէ ժողովուրդն իրենց կողմն ըլլար, անշուշտ տեղի չպիտի ունենար ու է կռիւ։ Ինչո՞ւ

(*) Վերջին պահուն Թերթերու մէջ կտրուցինք Թէ Դաշնակցական փորձեր են անցեալ կիրակի ալ միմիկն մը սարքել եկեղեցիին մէջ, բայց չեն յաջողիր։

(**) Տաճարի նախորդ Թուով կը քննադատէինք Տիար Վարդգէսն եւ իրեն համախոհները, որ ընդհանրապէս լուր կը մ'նան Օսմ. Խորհրդարանին մէջ։ Ուղղամտութեան պարտք մը ունինք հատուցանելու, յիշատակելով այստեղ Տեարք՝ Վարդգէսի, Տորք. Ն. Տաղաւարեանի, Դեղամ Տ. Գարապետեանի Օսմ. Խորհրդարանին մէջ գործածած ազդու լեզուն՝ Ազգ. Հիւանդանոցի եւ Դալ-Ֆաեան որբանոցի հացի եւ մսի պարէնը կտրուելուն, Ատանայի հրկիզեալ եկեղեցիներուն յատկացուելիք նպաստին, եւ մանաւանդ գաղթականաց հողային խնդրին առթիւ։ Փափարելի է որ աւելի կորով եւ կազմակերպուած գործունէութիւն ցուցնէին ի նպաստ Հայոց խնդիրներուն, Օսմ. Խորհրդարանին մէջ։

մանաւանդ այն բռնակալական մեթոտները՝ ուրիշին խօսելու ազատութիւնը կապելու համար։ Ինչո՞ւ յարձակուիք Դաշինին վերայ։ Ասոնք շատ տգեղ բարքեր են, և իրենց արդիւնքը բացարձակապէս խոտարնակը կ'ըլլայ իրենց բաղձացածին, հեռացնելով իրենցմէ ոչ միայն չեղոք տարրերը, այլ և իրենց ջերմ համակիրներն անգամ։

ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ՀՈՂԱՅԻՆ ԽՆԴԻՐԸ

Ազգ. Պատրիարքարանի գլուխը և բերանացի դիմումներուն վրայ, կառավարութիւնն որոշեց քաղաքային և զինուորական մէյմէկ պաշտօնեայէ յանձնաժողով մը ղրկել գաւառները, տեղւոյն վրայ քննութիւն կատարելու հողային խնդիրներու մասին, և տեղային իշխանութեանց աջակցութեամբ հարկ եղածը գործադրելու համար։ Յանձնաժողովը ճամբայ ելած է արդէն։ Սկսելով Տրապիզոնէն, պիտի այցելէ հայաբնակ նահանգներու ամէն կողմերը։ Պաշտօնավարութեան պայմանաժամն է չորս ամիս, բայց չի կարծուիր որ այդքան կարճ ժամանակի մէջ կարենայ գործն աւարտել։ Ազգ. Պատրիարքարանի կողմէ պատրաստուած ցուցակագրութենէ մը կը հասկցուի թէ 6000 ի կը հասնին վէճի առարկայ եղած հողերը, իրարմէ հեռու գաւառներու մէջ։

Թէեւ վանէն և ուրիշ գաւառներէ թողութակցութիւններ շատ աննպաստ գոյներով կը ներկայացնեն կացութիւնը, բայց յուսալի է միշտ նպաստաւոր ելք մը, քանի որ յանձնաժողովը դեռ նոր ճամբայ ելաւ, Օսմ. Խորհրդարանը դեռ նոր ձեռք առաւ խնդիրը, և գործը դատարաններու միջոցաւ կարգադրելու եղանակը, — որ իսպառ աննպաստ էր ազդեցիկ տարրերու դէմ իրենց արդար իրաւունքը պաշտպանելու կարողութենէն և միջոցներէն զուրկ խեղճ գիւղացիներուն համար, — մէկդի թողուելով՝ վարչական եղանակով կարգադրելու և ի հարկին հատուցում ընելու սկզբունքն ընդունուած է երեսփոխաններու կողմէ։

Ահա՛ կենսական հարց մը՝ Հայ ժողովուրդին համար։ Դաւառի առաջնորդութիւնները և վարչական մարմինները մեծ չըջահայեցութիւն և խոհականութիւն պար-

տաւոր են ցուցնել, խնդրոյն նպատաւոր լուծումը ձեռք բերելու համար: Ու մենք կը կարծենք թէ գաւառի մէջ գործող կուսակցականներ, փոխանակ ներքին վէճերով ազգային կեանքը քայքայելու, շատ աւելի օգտակար գործ մը ըրած կ'ըլլան՝ օժանդակելով տեղային իշխանութեանց, այս կարգի խնդրոց կարգադրութեան մէջ:

ՀՐԱՏԱՐԱԿԱՅԱԿԱՆԸ

Օրաթերթերու մէջ երկար ժամանակէ ի վեր յուզուած խնդիր մը յաջող լուծման մը յանգելու վրայ է: Հրատարակչական ընկերութեան մը կազմութեան հարցն է այն, որուն օգուտն ամէն ոք կը խոստովանի. բայց ոչ ոք կը ստանձնէր նախաձեռնութիւնն այդքան անհրաժեշտ գործի մը: Թրքահայերս, հակառակ որ մտքի զարթոնումը շատ աւելի կանուխ սկսած է մեր քան մեր ռուսահայ եղբայրներու մէջ, այսօր անհամեմատ կերպով ետ մնացեր ենք անոնցմէ: Բազմադիմի պատճառներ կան կան ասոր. ինչպէս կրթական ուղղութեանց հիմնական տարբերութիւնը, Թրքահայերուս ենթարկուած երեսնամեայ բռնակալութիւնը որ արդէն կ'ըլլար ու է լուրջ, օգտակար շարժումի, են: Բայց կարեւոր պատճառ մըն էր նաեւ կազմակերպուած հրատարակչական մարմնոյ մը չգոյութիւնը, որով գիտական, գրական, պատմական, բանասիրական լուրջ աշխատութեանց հեղինակները կը մնային զուրկ իրենց հմտակից գործերը հրատարակելու դիւրութենէն և ամէն քաջալերանքէ:

Ուրախ ենք մտածելով որ կազմուելիք Հրատարակչականը վերջ պիտի տայ կացութեան մը, որ սկսած էր ա'լ անպատուաբեր դառնալ Թրքահայուն: Գործին նախաձեռնութիւնը կուգայ Եգիպտահայերէն: Վսեմ. Արքայամ փաշա Բարթող տրամադրած է 200 եգիպտ. ոսկի, Մատթէոս էֆ. Խերեան՝ նոյնպէս 200 եգիպտ. ոսկի, և Ս. և Տ. Կամարական եղբարք 100 ոսկի, գումար 500 ոսկի, որ պիտի բարձրանայ 1200 ոսկիի, պայմանաւ որ կազմելի Հրատարակչական մարմնոյն նախագահութիւնն ստանձնէ Դուբեան Ամեն. Ս. Պատրիարք

Հայրը, և ատենապետութիւնը՝ Վսեմ. Գարբիէլ էֆ. Նորատունկեան, և այդ մարմնոյն մէջ չգտնուի կուսակցական անդամ: Հաճոյքով կ'արձանագրենք թէ Ս. Պատրիարքն և Նորատունկեան էֆ. ստանձնած են իրենց առաջարկուած պաշտօնը, և կը խորհրդակցին նուիրատուներու փափաքած ձեւով կազմելու համար այս հրատարակչական մարմինը: Յոյս ունինք որ Թրքահայ մեծատուններ ևս պիտի ուզեն հետեւիլ Եգիպտահայոց տուած գեղեցիկ օրինակին, կարեւոր դիրք մ'ընծայելու համար այս օգտաշատ գործին, գիտնալով որ միտքի ուժին և գրամի ուժին համերաշխ ու գիտակից գործակցութեամբ է որ ամէնէն գեղեցիկ ու տեսական արդիւնքներն յառաջ կուգան և կը բարգաւաճին հետզհետէ:

ԵՊԻՍԿՈՊՈՍՍԿԱՆ ձեռնադրութիւնն ստանալու համար որոշեալ վարդապետները հետզհետէ ճամբայ կ'ելլեն իրենց տեղերէն, պաշտօնական ձեւակերպութեանց աւարտումէն ետքը ուղեւորելու համար ի Ս. Էջմիածին: Տ. Բարգէն Ծ. Վ. մայրօրքդաքս կը գտնուի արդէն, ինչպէս նաեւ Երուսաղէմի Պատր. տեղապահ Տ. Դանիէլ Ծ. Վ.: Ուրախութեամբ կարդացինք թերթերու մէջ թէ Սեբաստիոյ Առաջնորդ Տ. Թորգոմ Ծ. Վ. ևս կը գտնուի Եպիսկոպոսներու ցանկին մէջ, Սեբաստացիներու խնդրանք: Նաեւ Պանտրմա—Պալըքէսիւրի առաջնորդ Տ. Կարապետ Ծ. Վ. Մալլըմսանի եպիսկոպոսացումը խնդրուած է վիճակայիններէն: Միւս կողմէ իրազեկ աղբիւրէ կը տեղեկանանք թէ Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետը փափաք յայտնել է առաջին առթիւ եպիսկոպոսանալու համար զրկուելիք վարդապետներուն մէջ տնտեսել Եգիպտոսի առաջնորդ Աղաւնունի Տ. Մկրտիչ Ծ. Վարդապետը, և Խարբերդի տեղապահ Տ. Գէորգ Ծ. Վ. Ապանեանը: Զգիտենք թէ Ազգային Վարչութիւնն ինչ կը խորհի այս մասին. ամէն պարագայի մէջ երկուքն ալ իրենց ազգօգուտ գործունէութեամբ ուշագրաւ հանդիսացած են,

և մասնաւորապէս Ասլանեան Հայր սուրբը ընդհանուր գնահատութեան արժանացած է, Ասանայի կոտորածին ժողորդային իսկ յօժարակամ փութալով աղէտին վայրը, ուր մեծ եղաւ իւր դերը՝ հոգիի և սուրի մասնուած տագնապեալ ժողովուրդ մը սփոփելու համար:

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ գեղեցիկ օրինակ մը կ'ընծայէ Աւեսաբեր, իր վերջին թիւին մէջ հրատարակելով վեհ. Հայրապետին կոնդակը, ըսելով թէ «մենք այս պատեհութիւնը յարմար դատեցինք, զարդարելու համար Աւեսաբերի էջերը այս կարեւոր պաշտօնագիրով, որ այժմէական պատգամ մը կը պարունակէ բոլոր Հայերու համար և պատմական արժէք մը պիտի ունենայ ապագայ տարիներու մէջ»:

Նոյն թերթին նախորդ շաբթուան թիւին մէջ հաճոյքով կարդացինք թէ Պատ. Բ. Ծէճիղեան Մայիս 15/ին իր ժողովուրդին կարդացած է Հայոց Հայրապետին Անդրանիկ կոնդակը, առաւօտեան պաշտօնի ժամանակ, և տուած է հարկ եղած բացատրութիւնները:

Ս. ՊԱՏՐԻԱՐԻՔԸ, առաջին անգամ ըլլալով Ազգ. տարեգրութեանց մէջ, ի մօտոյ ուղեւորութիւն մը պիտի կատարէ գաւառները, այցելելով մասնաւորապէս ծովեզերեայ քաղաքները, նաև Ատանան չըջականելով: Ասիկա սրտապնդող տպաւորութիւն մը պիտի գործէ Հայ ժողովրդեան վրայ, և բարերար ազդեցութիւն մը կ'ունենայ իւր մեր ազգասէր Պատրիարքը կարենայ գոհացում տալ ներքին ուրիշ գաւառներ ալ այցելելու, և իր բարոյական բարերար սփոփանքին հետ մէկտեղ նիւթական շօշափելի օժանդակութիւն մը տալու բաղձանքին:

Կ Ա Ր Ե Ի Ո Ր

Անհատապէս և ուղղակի խմբագրութեանս ուղղուած նամակով բաժանորդագրուողներէն անոնք որ տալուին չեն զրկած իրենց բաժնեգիրներ, վերջին թիւն է (12րդ) որ կը ստանան այս անգամ: Ուստի պէտք է փութան բաժնեգիրն անյապաղ դրկել, եթէ կ'ուզեն որ չընդհատուի թերթին կանոնաւոր աւաքումը:

Նոյնը կը կրկնենք այն Պատ. Գործակալներուն, որ ցարդ իրենց հաշիւը ճշտած չեն խմբագրութեանս հետ:

ՎՐԻՊԱԿ.—Տաճարի 10րդ թիւին մէջ հետեւեալ մէկ երկու վրիպակները սպըրդած են.—

էջ	Սիւնակ	Տող	Սխալ	Ուղիղ
293	Բ	3	և գնորն	և զգեցարուք գնորն
296	Բ.	14	առնակա- նութիւնները	աւանդու- թիւնները
297	Ա.	11	տիտղոսները	պտուղները
309	Բ.	40	խաչուհի	խաչուհի
310	Ա.	17	խաչուհի	խաչուհի
310	Ա.	18	խաչուհի	խաչուհի
310	Ա.	41	արօրն	արօրն

ՅԻՇԱՏԱԿ ՅԻՄՆԱՄԵՍԹ ՅՈՒՅԼԵՍՆԻ Ս.ԶԳ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ. — Դրավաճառ Զարդարեան եղբայրներն այս վերտառութեամբ հրատարակած են պատկերները Սահմանադրութեան հիմնադիրներու և ժամանակակից դէմքերու, նոյն հիմնադիրներու ինքնագիր ստորագրութիւններով: Գեղեցիկ գործ մը, սրահներու զարդ ըլլալու չափ մաքուր կերպով պատրաստուած: Գին 100 փր:

ԱՐՏՕՆԱՏԻՐ

ՀՄԱՅՆԱԿ ԲԶՆԵ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԱԿԻՐ

ԶՔՐՄԱՅՐ ԲԶՆԵ. ԿԷԶԻՐԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ

„ՏԱՃԱՐԻ”

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար սարեկան	35 դուրուս
Գաւառաց » »	40 »
Արշասահմանի համար սարեկան	10 Ֆրանկ
Ձեռքէ կը ծախուի պրակը	50 փարայ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Գնէլ Մ. Վրդ. Գալէմբարեան
2. Տ. Տիրայր Մ. Վրդ. Մարգարեան
3. Տ. Ղեւոնդ Մ. Վրդ. Դուրեան
4. Տ. Պարգեւ Վրդ. Դանիէլեան
5. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
6. Տ. Արիստակէս Բնյ. Հիսարեան
7. Տ. Զարմայր Բնյ. Կէզիւրեան

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Ղեւոնդ Մ. Վրդ. Դուրեան
2. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
3. Տ. Խորէն Բնյ. Յարութիւնեան
4. Տ. Սուքիաս Բնյ. Պալլըզճեան
5. Տ. Պողոս Բնյ. Պէյազճեան
6. Տ. Խորէն Բնյ. Վարդանեան
7. Տ. Գէորգ Բնյ. Անանեան
8. Տ. Գրիգոր Բնյ. Ճէպէճեան

Տաճարի թէ՛ վարչական և թէ խմբագրական գործերուն համար պէտք է դիմել առ
Զարմայր Բահանայ Կէզիւրեան, Կ. Պոլիս Պէշիքթաշ, Հայոց Եկեղեցի,

درسماعده بشكطاشده ارمق کليسا سنده «داجار» فزتمى مديرى پاپاس زارماير

Rev. Père Zarmaïr Guézurian

Rédacteur de la Revue «DADJAR» Constantinople, Béchiktache, Eglise arménienne